


# ՀԱՐՍԱՆՅԱՑ ԾԵՍՆ ՈՒ ԿՈՄԻՏԱՍԸ

Կազմեց
ԱՐԹՈՒՐ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԸ

# ՀԱՐՍԱՆՅԱՑ ԾԵՍՆ ՈՒ ԿՈՄԻՏԱՍԸ

Նարեկացի Արվեստի Միություն
Երևան 2019

ՀՏԴ 392.5
ԳՄԴ 63.5
Հ 398

Հարսանյաց ծեսն ու Կոմիտասը/ Կազմ.՝ Ա. Շահնազարյան.- Եր.:
Հ 398 «Նարեկացի» արվեստի միություն, 2019.- 110 էջ:

Սույն գրքույկը և կից ձայնագրությունները ներկայացնում են հայոց հարսանյաց ծեսը և հարսանեկան երգերը, որոնք գրառել է Կոմիտասը: Այս նախագծի նպատակն է՝ վերականգնել հարսանյաց ծեսի ավանդույթը՝ հարմարեցված այսօրվա պահանջներին:

ՀՏԴ 392.5
ԳՄԴ 63.5

ISBN 978-9939-9085-6-4
ISMN 979-0-69380-216-6

© ℗ «Նարեկացի» արվեստի միություն, 2019

# Նարեկացի

# արվեստի միության խոսք

«Նարեկացի» արվեստի միության ծավալած գործունեության կարևոր մասն են կազմում մեր հրատարակությունները. մինչ օրս ՆԱՄ-ի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ լույս են տեսել արվեստի վերաբերյալ գրքեր, ալբոմներ, տեսասկավառակներ և ձայնասկավառակներ:

Այս անգամ մեր քայլերն ուղղված են հանճարեղ Կոմիտասի հարսանեկան երգերի շարքին:

Հայ ժողովուրդը մեծ թվով հարսանեկան երգեր ունի, որոնք ժողովրդական հնագույն ավանդական ծեսերի միջոցով ներկայացնում են մեր պատմական կենցաղը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները. հարսանյաց հանդեսի ժամանակ կատարված երգերը

Կոմիտասը առանձնակի հոգատարությամբ և խնամքով է հավաքագրել՝ մշակելով և իր ոգեշունչ կատարումներով խթանել ազգային արժեքների տարածմանն ու ճանաչմանը:

Մեզ են հասել գոհարներ, որոնք ազգային մշակույթի ինքնատիպ և ամուր հիմքերից են:

Երբ լսում ենք Կոմիտասի հարսանեկան երգերի շարքը, մտածում ենք, թե ի՜նչ հիանալի կլիներ, եթե այս ստեղծագործությունները հնչեին մերօրյա հարսանեկան արարողությունների ժամանակ, ի՜նչ հրաշալի կլիներ, որ այս հնչյունների միջոցով հայը երբեք չմոռանար իր ինքնությունն ու արմատները. այս մտորումների արդյունքում որոշեցինք զրույց-քննարկում ունենալ կոմպոզիտոր, կոմիտասագետ Արթուր Շահնազարյանի հետ: Քննարկումը տվեց իր արդյունքը, և մենք սկսեցինք կյանքի կոչել «Հարսանյաց ծեսն ու Կոմիտասը» հրատարակության ստեղծման գործընթացը: Լիահույս ենք, որ մի օր կվերականգնվի այդ գեղեցիկ և մեծախորհուրդ ավանդույթը, և հարսի ու փեսայի աստվածային օրհնությունը կզարդարվի ազգային ելևէջներով:

# ՆԱԽԱԲԱՆ

Այս նախագծի նպատակն է՝ վերականգնել մեր ազգային հարսանյաց ծեսի ավանդույթը՝ հարմարեցված այսօրվա պահանջներին:

Հայկական ավանդական հարսանիքը տևել է յոթ օր, և յուրաքանչյուր օրն ունեցել է իր խորհուրդը: Այսօր հարսանյաց ծեսն ամբողջական հնարավոր չէ իրականացնել, ուստի ընտրել ենք ծեսի կիրառելի որոշ հատվածներ և կազմել մի այնպիսի սցենար, որ հնարավոր լինի մեկ օրում կատարել ազգային հարսանյաց ծեսը:

Մեր ժողովուրդը հարսին և փեսային անվանել է Արև և Լուսին, և այդ հարսանյաց ծեսը ներկայացրել է իբրև Արևի և Լուսնի տիեզերական ամուսնություն: Հարսին և փեսային նաև անվանել են Թագավոր (հետագայում՝ Թագվոր) և Թագուհի, ծեսը համարվել է թագավորի և թագուհու ամուսնություն: Այս տարաշխարհիկ սքանչելի ծեսն այսօր փոխարինվել է, մեղմ ասած, ականջ խլացնող աղմուկով, ուտել-խմելով, ոչ հայկական լացակումած երգերով և օտարածին պարեղանակներով ու պարերով:

Ժամանակն է, որ ստեղծվի մի կազմակերպություն, որը ցանկացողների համար կարող է կազմակերպել ավանդական ազգային հարսանյաց հանդեսը՝ ժամանակի պահանջներին համահունչ:

Այդ գործընթացին կարող է նպաստել նաև սույն գրքույկը, որը կարող է համարվել մի նախնական ուղեցույց:

Գրքույկում տրված են.

**ա/** Հարսանյաց հանդեսի մի տարբերակ՝ համահունչ այսօրվա պահանջներին

**բ/** Հարսանյաց ավանդական ծեսի նկարագրություն (Ա. Շահնազարյանի «Կոմիտաս» գրքից)

**գ/** Հատվածներ Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի» առաջին հատորից, որտեղ նկարագրված է ընդհանրական ծեսը (27 հատորներում նաև տրված են հարսանյաց ծեսի նկարագրությունները առանձին-առանձին՝ ըստ Հայաստանի տարբեր գավառների)

**դ/** Կոմիտասի գրառած հարսանյաց երգերը





## ԾԵՍԻ ԸՆԹԱՑՔԸ
**ժամանակակից մատուցմամբ**

Հարսն ու փեսան պետք է հագնեն թագվորին և թագուհուն վայել հարսանյաց ազգային տարազ:

Սեղանների սպասքը, և հարսանիքին առնչվող ամեն ատրիբուտ պետք է ազգային մշակույթի լավագույն ու բարձրակարգ օրինակ լինի:

**1 |** Թագվորի տանը զարդարում են հարսանյաց Կենաց ծառը՝ 12 ճյուղերով՝ վրան մրգեր (երգում են ծառն օրհնելու երգը՝ «Երկնից, գետնից սուրբ զորությունով»):

**2 |** Քավորը և թագվորի ընկերները հարսի՝ թագուհու տուն են տանում նրա հանդերձը: Երբ հասնում են հարսնատուն, առաջինը լուր է տալիս Աղվեսը (Աղվեսը թագվորի կողմից ընտրված անձն է, ով զանազան կատակ-«օյիններ» է սարքում՝ ուրախացնելով մասնակիցներին):

**3 |** Քավորակինը հարսի ընկերուհու հետ հագցնում է հարսի շորը:
Աղջիկները հարսի գովքն են անում՝ երգելով - «Ասենք շնորհավոր», «Եղնիկ»:

**4 |** Թագվորը Կենաց ծառով գալիս է հարսնառի (հարսին հայրական տնից տանելու):
Փչում է զուռնան, հարսանքավորները պարում են, ապա երգում են «Խնամի» երգը: Մտնում են տուն և շնորհավորում:

**5 |** Հարսը նստած է աթոռին: Երգում են «Ելի՛ր, ելի՛ր» երգը, և հարսը ոտքի է ելնում:
Հարսի անունից մեկը երգում է հրաժեշտի երգ-լացը՝ «Դուն, հալա՛լ մերիկ, եկած կտանեն քու սրտիկ դալարիկ»:
Հայրական տնից դուրս գալիս հարսը համբուրում է տան դուռը: Նախքան հարսի դուրս գալը թրով փակում են տան դուռը:

**6 |** Փեսայի մեջքին կապում են երկար նարոտ-թաշկինակ, որի ծայրից բռնած՝ հարսը քայլում է նրա հետևից (միայն եկեղեցում պսակադրվելուց հետո է հարսը քայլում փեսայի կողքին): Ամենքը գնում են եկեղեցի: Կատարվում է պսակի արարողությունը:

**7 |** Պսակադրությունից հետո բոլորը գնում են հարսանքատուն:

**8 |** Ուրախ, աշխույժ շուրջպարով ու երգով մեջտեղ են կանչում փեսայի մորը՝ երգելով «Թագվորի՛ մեր, դո՛ւս արի, տե՛ս՝ քեզ ինչեր ենք բերել» կատակ-պարերգը:

**9 |** Թագվորի մայրը մոտենում է թագվորին ու թագուհուն, լավաշ է գցում ուսերին, մեղր է տալիս: Զույգը ոտքով ջարդում է իր ոտքերի առջև դրված ափսեները և առաջ անցնում:

**10 |** Թագվորն ու թագուհին նստում են իրենց տեղերը: Խումբը երգում է թագվորագովքեր. «Քաղենք, բերենք մեր թագվորին», «Թագվո՛ր, բարո՜վ, հազա՜ր բարով»:

**11 |** Նախքան քեֆը սկսելը խնամիների «բանակների» միջև մենամարտ է տեղի ունենում՝ թագվորի Ծառին տիրանալու համար. բերում են մի պարան, և խնամիների կողմից ընտրված մարդիկ զուռնա-թմբուկի նվագի ներքո սկսում են քաշել պարանի ծայրերից: Հաղթող կողմը (թագվորի կամ թագուհու) տիրանում է Ծառին:

**12 |** Ամենքը ոտքի վրա են, զրուցում են, իսկ Աղվեսը պտտվելով կատակում է նրանց հետ: Ծաղրածուն զբաղեցնում է երեխաներին: Հանդիսականները դիտում են կերակուր պատրաստելու արարողությունը, թոնիրում թխվում է լավաշը, պատրաստվում են մյուս համեղ խորտիկները: Կենտրոնում դրված են ազգային գեղեցիկ կուժեր, գինով լի կարաս, որից շերեփով գինի են լցնում բաժակները:
Այս ընթացքում երգով կանչում են փեսայի հորն ու մորը, որ օրհնեն թագվորին ու թագուհուն:
Երգում են «Գացե՛ք, բերե՛ք թագվորամեր, թագվորահեր...»:

**13 |** Հարսը մոտենում է թոնրին և աղ է գցում կերակուրի վրա:

**14 |** Բոլորին բաժանվում են երգերի բառերը, որպեսզի ընթացքում միասին երգեն:

**15 |** Սկսվում է կերուխումը: Սեղանապետը քեֆի ընթացքում կենացներ է խմում: Յուրաքանչյուր կենացին հաջորդում են երգ, պար, ներկայացում և այլն:




**Սեղանապետի կենացներից են.**

**1 |** Բարով տեսանք

**2 |** Թագվորի և թագուհու կենացը - շնորհավորում են բոլորը: Երգում են «Է՜ն արև, երկնո՜ւց արև, տեսե՜ք՝ էն որն է», «Առնեմ, երթամ իմ յարը» պարերգը:

**3 |** Նորապսակների ծնողների կենացը

**4 |** Քավորի կենացը (երգ՝ «Բաժակը տվե՜ք քավորին»)

**5 |** Տատիկ-պապիկների կենացը

**6 |** Երկկողմանի բարեկամների կենացը

**7 |** Քույր-եղբայրների կենացը

8 | Բանակի կենացը (երգում են «Ձայն մը հնչեց էրզրումի», «Մենք քաջ տոհմի զավակներն ենք»)

9 | Ընկեր-ընկերուհիների կենացը (երգ՝ «Բարի, գեղեցիկ ընկերը մարդու»)

Թամադայի կենացների արանքներում տեղի են ունենում զանազան բաներ.

**ա/** Աշուղների մրցույթ՝ հարսի գեղեցկությունը գովելու: Հաղթող աշուղը նվեր է ստանում:

**բ/** Թագվորը ցորեն է շաղ տալիս, որ տարին բերքառատ լինի:

**գ/** Երգ-ներկայացում՝ «Կոտ ու կես կորեկ ունեմ»

**դ/** Սկեսուրը հարսին ավել է տալիս, և հարսը մի փոքր տեղ ավլում է:

**ե/** Աղվեսը գողանում է հարսի կոշիկը և նվեր ստանալով՝ վերադարձնում է կոշիկը, որ հարսը պարի:

**զ/** Հարսը ելնում է պարելու (երգում են «Տոտիկ, տոտիկը»):

Հարսը պարում է (հնչում է պարեղանակ):

**է/** Թագվորի և թագուհու պարը:

**ը/** Տերտերի հանդերձով մեկը՝ խաչը ձեռքին, խլում է քավորի թուրը և բացականչում.

- Ժողովո՜ւրդ, էս թրով հարսի լեզուն կտրելու եմ:

Աղաչանք-պաղատանք են անում, նվեր տալիս, որ հարսի լեզուն չկտրի:

**թ/** Հարսանյաց հանդեսի ընթացքում, բացի զանազան պարեղանակներից, հնչում է նաև բուն ժողովրդական ուրախ երգերի ու պարերգերի շարան, ինչպես նաև «Մաքրուհի՛ ջան», «Դէ՜, հէ՜, զընգը, զընգը», «Խնամի՛ ջան, եկել եմ, եկել» և այլ երգեր: Այդ ընթացքում բոլորը միասին երգում են իրենց բաժանված երգերի բառերի օգնությամբ:




# ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՍԱՆՅԱՑ ԾԵՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՐՍԱՆՅԱՑ ԾԵՍ

**Հատվածներ Ա. Շահնազարյանի «Կոմիտաս» գրքից**

Հայկական գավառներում հարսանյաց ծեսն ուներ թե՛ տարբերություններ, թե՛ ընդհանրություններ: Իհարկե, կային նաև աղավաղումներ ու ազգային բուն ավանդույթներից շեղումներ:

Կոմիտասը կարող էր գրառել բազմաթիվ հարսանեկան երգեր ու պարեր, բայց նա փնտրում էր նախնական ծեսը, որ փոխանցվել

էր դարերի խորքից և ծվեն-ծվեն լինելով՝ մաս առ մաս պահպանվել այս ու այն գյուղերում:

Կոմիտասը հենց լսում էր՝ մի տեղ հարսանիք կա, գնում էր առանց հրավերի: Որևէ մարդ, առավել ևս հայ հոգևորականը միշտ էլ ցանկալի հյուր էր նման հանդիսության ժամանակ:

Հեշտ չէր գրառել հարսանյաց որոշ երգեր, քանի որ դրանք երգում էին փակ սենյակներում, երգում էին հարսի ընկերուհիները հարսի համար: Վարդապետը ստիպված էր դրանք ականջի ծայրով լսել սենյակից դուրս՝ մի տեղում աննկատ կանգնած:

Յուրահատուկ էին հարսանյաց երգերը. դրանց ելևէջները, Կոմիտասի համոզմամբ, գալիս էին հնագույն ժամանակներից: Դրանք խորհրդավոր մեղեդիներ էին, որովհետև այս ծեսը պատկերում էր Արևի և Լուսնի ամուսնությունը: Փեսան համարվում էր Արևը, իսկ հարսը՝ Լուսինը:

Յոթօրյա ծեսի յուրաքանչյուր օրը նվիրված էր մեկ լուսատուի:

Առաջին օրը Լուսնի օրն էր:

Երկրորդ օրը՝ Երևակի օրը, հարսի ձեռքերը հինա էին դնում, հինայով ձեռքերին նախշ-խորհրդանիշներ էին նկարում, և հարսի ընկերուհիները երգում էին հարսի համար:

Երրորդ օրը՝ Փայլածուի օրը, գալիս էին հարսին հայրական տանից տանելու. հարսնառն էր:

Չորրորդ օրը (կենտրոնական օր) Լուսնթագի օրն էր: Կատարվում էր պսակադրության բուն արարողությունը եկեղեցում, իսկ տանը շարունակվում էր ժողովրդական ծեսը:

Հաջորդ օրը՝ Լուսաստղի օրը, առավոտից կերուխում էր, երգ ու պար, և անպայման պարում էին հարսն ու փեսան, և այդ պահին փեսան տան մեջ ցորեն էր շաղ տալիս՝ ստանալով ցանելու իրավունք, քանի որ չամուսնացածները իրավունք չունեին ցանքս կատարելու:

Վեցերորդ օրը՝ Հրատի օրը հարսն ու փեսան մտնում էին ամուսնական առագաստ:

Յոթերորդ օրը (վերջին օր) նվիրված էր Արևին: Առավոտյան երիտասարդները հարս ու փեսայի հետ բարձրանում էին տան

կտուրը և Արևին ձոնված երգերով դիմավորում էին արևածագը: Եվ ամեն օր ու պահ ուներ իրեն հատուկ երգը:

Դա տիեզերական ծես էր, և ուրախությունը մարդու ներսում էր: Այդ հարսանիքին չկար հանդիսատես. ամենքը մասնակից էին:

Կոմիտասը զարմացել էր՝ ափսոսալով, թե այսքան դարեր ինչու որևէ մեկը ուշադրություն չէր դարձրել այս ծեսին, ոչ ոք չէր գրանցել այդ տարաշխարհիկ երգերը:

Ծեսի գլխավոր մասն է թագվորի ծառը. դա Կենաց ծառի խորհրդանիշն է: Փեսան կոչվում է թագավոր, հարսը՝ թագուհի: Ահա զարդարում են Կենաց ծառը և գովում: Ծառի գովքի երգում Կոմիտասը լսում է իր նախնյաց գողթան գուսանների երգի բառերի հեռու արձագանքը.

Երկնից, գետնից սուրբ զորությունով
Այն ծառն ծաղիկ էր,
Ծառ ծաղկեցավ,
Ծառ բազմեցավ
Կանաչ ու կարմիր:

Կենաց ծառի այս երգը հետագայում Կոմիտասը բազմաձայնեց երգչախմբի համար այնպես, որ մյուս ձայները բարձրանում էին նրբորեն և հնչում կանաչ-կարմիր ծիածանի մեջ:

Հարսանյաց ծառերը, մի ընդհանուր նմանություն ունենալով հանդերձ, տարբեր վայրերում տարբեր ձև ու տեսք ունեն: Ծառի գովքի երգերում թվարկվում են զանազան բույսերի ու ծառերի անուններ. «Թագվո՛ր, քո ծառն էր խնկենի», հետո՝ արմավենի, նշենի, մորենի, թզենի, նռնենի, խնձորենի և այլն: Կոմիտասը գիտեր, որ տարբեր երգերով գովերգվող այս ծառը հարսնառի օրը «պատերազմի» պատճառ է լինելու, քանի որ, ծեսի համաձայն, հարսի ու փեսայի բարեկամները՝ իբրև երկու «բանակներ», կռվելու էին՝ թագվորի ծառին տիրանալու համար. ծառը բռնում էր փեսան՝ կանգնած կտուրին, և ով կկարողանար հասնել նրան և դիպչել ծառին, նրա կողմն էլ կհամարվեր հաղթողը:

Իսկ հիմա ծառը երգերով գովելուց հետո մի նոր երգով խումբը կանչում է փեսայի հորն ու մորը:

Գացե՛ք, ասե՛ք,
Թագվորամե՛ր,
Ծառդ գոված է...

Գացե՛ք, ասե՛ք,
Թագվորահե՛ր,
Ծառդ գոված է...

Գացե՛ք, ասե՛ք,
Թագվորաքույ՛ր,
Ծառդ գոված է...

Գացե՛ք, ասե՛ք,
Թագվորահա՛րս,
Ծառդ գոված է.
Չորս զույգ գուլպա,
Մի թաշկինակ
Ծառ գովողինն է:

Գացե՛ք, ասե՛ք,
Թագվորաղբե՛ր,
Ծառդ գոված է.
Երկու ճնճուղ,
Մեկ գարե հաց
Ծառ գովողինն է:

Իսկ հարսի տանը ընկերուհիները հյուսում են հարսի մազերը, հագցնում են շորերն ու երգում: Այդ երգերից Կոմիտասն առանձնացրեց մի երգ, որտեղ հիշվում են Արարատները: Երգը հարց ու պատասխանի ձևով է.

-Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես արծել:
-Ասիս-Մասիս սարն եմ արծել:

-Եղնի՛կ, դու ո՞ր ջուրն ես խմել:
-Սառն աղբյուրի ջուրն եմ խմել:

-Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես քնել:
-Հայոց Անի սարն եմ քնել:
-Եղնի՛կ, դու ո՞ր ծառն ես քերվել:
-Ծառ խնկենի ծառն եմ քերվել:

Այս ընկերուհիները խորհրդանշում էին լուսնին շրջապատած աստղերը:

Ավանդության համաձայն՝ արևը թագավոր է, լուսինը՝ թագուհի: Լուսինը շրջագայության է դուրս գալիս այն ժամանակ, երբ արար աշխարհը քնած է լինում, որպեսզի ոչ ոք չկարողանա իրեն տեսնել: Նա զբոսանքի է դուրս գալիս՝ շրջապատված աստղերով, որոնք իր կույս ընկերուհիներն ու նաժիշտներն են: Լուսին թագուհին ծով բարիքներ է սփռում աշխարհի բոլոր արարածներին, մեկ-մեկ էլ ամոթխածությունից իր դեմքը ծածկում է ամպի քողով:

Իսկ փեսայի տանը գովում էին թագվորին ու հիշում ծաղիկների տեսակները:

Թագվո՛ր, ի՞նչ բերեմ քո նման,
Քո կանաչ արևու նման.
Անթառամ ծաղիկ, որ կբացվեր,
Բացվեր քու արևու նման:

Գովում էին նաև թագվորի ձիուն.

Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Պսակն էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Մեր թագվորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,

Ձիուկն էր հրեղեն,
Թագվորն էր վրեն:

Հարսանիքի ամենահուզիչ պահն է հարսին տնից հանելը: Արարողությանը գաղտնի հետևել է Կոմիտասը:

Հարսը ծնված օրից ապրել է հայրական օջախում. իր մանկության թանկ հուշերն են թևածում այդ տան ամեն մի անկյունում, և որքան մոտենում է հոր տնից դուրս գալու պահը, այնքան հուզվում է հարսը: Քողը երեսին, գլուխը կախ՝ նստած է դեռ՝ շրջապատված կանանցով: Կոմիտասը չի տեսնում, բայց գիտի, որ հիմա մոր կաթը կթում են հարսի գլխին, որ մոր կաթի պես անարատ լինի, և աղ են ցանում վրան, որ աղի պես համով լինի հարսը: Արդեն պահն է, որ հարսը ոտքի ելնի, քայլի դեպի դուռը, բայց չի ելնում. ասես թուլացել են ոտքերը, և ահա խումբը երգում է ամենահուզիչ երգը, և երգելով հորդորում են հարսին ելնել ու գնալ. «Ելի՛ր, ելի՛ր, ելի՛ր...»: Երգի մեղեդին ասես դուրս է կանչում երկնքում պահված լուսնյակին ու նրան շրջապատող աստղերին. հարսը լուսինն է, որ պիտի ելնի ամպերի միջից՝ սահուն ու հեռու-հեռու... Եվ լալու է երկինքը: Արևի ձայնը խորհրդավոր հեռուներից կանչելու է լուսնին...

Աչքերը փակ լսում է Կոմիտասը ու չի գրանցում երգը: Նա հասկացավ, որ այդ երգը երբեք չի բազմաձայնի. այն կպահի միայն իր սրտում, և այդ երգը երբեք, երբեք չի ելնի բեմահարթակներ, այլ կմնա հարսի քողի տակ պահված, իսկ հնչյուններն ընդմիշտ կմնան հարսի հայրական տանը... Սկսեց երգել խումբը «Ելի՛ր»-ը, և հարսը լաց եղավ:

Ելի՛ր, ելի՛ր, ելի՛ր,
Երդիկ լուսացավ,
Ծառեր ժաժ եկան,
Տերևներ թափավ, ա՜խ...

Հարսնառը եկավ վերին կալերեն,
Հինեն բերեցին թղթի ծալերեն,
Հարսնառը եկավ գեղի վերևով,

Հինեն բերեցին ծտի թևերով:
Ելի՛ր, ելի՛ր , ելի՛ր,
Սարեր, ձորեր, մ՜ խ, ցածըցեք,
Յոթը աղբոր քուրը ջոկել կտանեն:
Աղջի՛, հարսնառդ եկավ գեղի վերևեն,
Քեզի քող բերեց թղթի թերթերեն:

Միգուցե սա է ծեսի ամենախորհրդավոր պահը. հարսը նստած է, դեռ չի բարձրանում: Հենց ոտքի ելնի, կսկսվի սրբազան խորհուրդը տիեզերական. նա է կրողը կյանքի. ինքը կյանքն է. նա կյանք կտա ու կծնի մի արևամանուկ և նրա համար կերգի նախնիներից իրեն փոխանցված արևամոր օրորը, և օրորոցից քիչ հեռու՝ օջախում, կբոցկլտա այն կրակը, որ վառել են նախնիք հազարամյակներ առաջ քարանձավում ու պարել են շրջանաձև շորորը՝ դանդաղ ու վեհապանծ... Նա ոտքի կելնի և կգնա արարելու մի նոր կյանք, ոտքի կելնի ու կգնա շարունակելու ցեղը և փոխանցելու ցեղի ոգին... Ահա այս փխրուն արարածի մեջ է ամբարված խորհուրդը խորին՝ սուրբ հայրենիքը... Ինքը մայր հողն է, հո՜ղը, հո՜ղը... («Հո՛ղ ելիր, ելի՛ր...»):

Հարսը լալով ոտքի կանգնեց:

-Երգի՛ր, լացի՛ր, լացի՛ր,-ասացին ընկերուհիները: Ծեսի համաձայն՝ հարսը պիտի երգի հրաժեշտի երգը, և նա սկսեց երգել լալով: Երգի հնչյունները հեծկլտոցի հետ փափուկ շեշտով թռչում էին վեր... Կոմիտասը, հեռու կանգնած, առանձնացել ու լսում էր աչքերը փակ և տեսնում էր հուլունք-հուլունք արցունքների կաթիլները՝ փոխված հնչյունների: Հետո նոտագրեց հարսի լացը և հեծկլտոցից վեր ելնող ձայների վրա նշանակեց փափուկ շեշտեր: Նոտագրած երգում երևում է, որ լացի ժամանակ հեծկլտոցի պես ելևէջը շունչը կտրում ու վեր է ելնում, հետո, նուրբ շեղվելով ու փուլ գալով, գլոր-գլոր իջնում է վար...

Հարսի հայրն ու մայրը, քույրերն ու եղբայրները կարոտ աչքերով լսում են հրաժեշտի լաց-երգը.

Մերի՜կ դուն հալալ,
Մերի՜կ դուն հալալ,
Եկած կըտանեն
Քո սըրտիկ դալար:
Քուրի՜կ դուն հալալ,
Քուրի՜կ դուն հալալ,
Եկած կըտանեն
Քո սըրտիկ դալար:

Կոմիտասը լսում էր այդ երգերը, մասնակցում ծեսին և մտածում, որ ինքը միայն գրառում է երգը, բայց ինչպե՞ս փոխանցել ծեսի ոգին, պատկերը, գույնը, տրամադրությունը, շարժումը... Չէ՞ որ եթե այս երգերը մի օր ինքը բեմ հանի, միևնույն է, կիսատ բան է մնալու ունկնդրի համար, և եթե նույնիսկ ծեսը թատերականացված բեմադրվի ու ներկայացվի, դարձյալ տեղ չի հասնելու այն, ինչ ապրում ու զգում է ինքը հիմա, որովհետև այստեղ չի կարող լինել հանդիսատես, այստեղ ամենքը, ինքն էլ նրանց հետ, մասնակից են ու գործող անձ: Ամենքը մեկ մարմին ու մեկ հոգի են: Կոմիտասը գործածում էր «համայնքի ոգի» արտահայտությունը, և երբ քննադատում էր մի անորակ երգ կամ երգեցողություն, ասում էր, թե բացակայում է «համայնքի ոգին»:

Կոմիտասը, լինելով հայ եկեղեցու սպասավոր, հուզված նայում էր, թե ինչպես է ժողովուրդը պահպանել լույսի հին հավատքի ծվենները, թե ինչպիսի երկյուղածությամբ են պաշտում օջախի կրակը, քանի որ այդ կրակը նրանց համար նաև գերդաստանի շարունակությունն ու հարատևությունն է, և այդ կրակի ծուխը ցեղի հարատևությունն է, և գյուղի ամեն տուն կոչվում է նաև ծուխ: Երբ ասում ենք այսքան ծուխ կա, նշանակում է՝ այսքան ընտանիք կա: Հարսանյաց ծեսում միաժամանակ այնպիսի բաներ էին տեղի ունենում, որ Կոմիտասն անկարող էր միաժամանակ տեսնել դրանք, ուստի տարբեր հարսանիքներում ինքն էր ընտրում, թե այդ պահին որտեղ լինի՝ հարսի՞ տանը, թե փեսայի. չէ՞ որ միաժամանակ երկուսի համար էլ երգում էին գովքի երգեր:

Ահա մի մեծ հարսանիքում հասել է այն օրը, երբ հարս ու փե-

սային եկեղեցուց բերում են փեսայի տուն. ճանապարհին հատուկ պար են պարում, որ կոչվում է «Փետախաղ»: Կոմիտասն արդեն գրառել էր այդ պարեղանակը, և հիմա նա փեսայի տանն է, հետևում է, թե մինչև հարս ու փեսայի գալը փեսայի մայրն ինչ արարողություն է կատարում: Մայրը մի տախտակի վրա դրեց չորս հաց, մի ափսեի մեջ՝ կրակ, կրակի վրա խունկ լցրեց և նախ պտտեցրեց օջախի՝ թոնրի շուրջը, ապա՝ տան չորս անկյունը, որտեղ ոգիներ կան: Կոմիտասը մտածեց, որ երգերից մեկը բազմաձայնելիս պետք է որ ձայներից մեկը ստեղծի պտտվելու տպավորություն և հետո ծխի պես բարձրանա ու տարածվի չորս կողմ՝ ապահովելով օդ ու տարածություն... Հեշտ է ասել՝ ձայներով արտահայտել այս ամենը, ձայներով փոխանցել ծխի ու խունկի հոտը և շարժումը, օջախի ջերմությունն ու մոր վեհությունը, քայլքը, տարազի նախշը, նա́խշը... Այն նույն նախշը, որ կա գորգի վրա, հազարամյակների ժայռապատկերներում և հարսիկի՝ հինայով նախշազարդված ձեռքերին: Հավաքվեցին հարսանքավորները հարս ու փեսայի հետ, և նախքան նրանց տուն մտնելը փեսայի մայրը, ափսեով կրակը ձեռքին, դուրս եկավ բակ և պտտվեց հարսանեկան զույգի շուրջը, իսկ երբ մտան տուն, հարսը երեք անգամ պտտվեց թոնրի շուրջը, այնուհետև փեսայի հետ ծունկի իջան և համբուրեցին օջախի շուրթը: Հարսը հորանց տնից բերած օջախի մոխիրը գցեց օջախի մեջ: Հետո նրանք համբուրեցին ամենատարեց ազգականի ձեռքը, վերջինս էլ օրհնեց նրանց, որ երկար կյանք ունենան, միշտ վառ պահեն օջախի կրակը, և միշտ ծխա երդիկը: Կոմիտասի աչքերը փայլեցին. այո́, այո́, այն երգի վերջին ակորդը պիտի լինի համբույրի նման, տաք օջախը համբուրելու պես, ամենատարեց ծերունու՝ հողից ճաքճքած ձեռքը համբուրելու պես. դրանք նույն բանն են՝ օջախն ու ձեռքը... Կլավի համբույրի ելևէջը, ինչպես Արևամոր օրորի ելևէջը, ինչպես Արևի կանչի ելևէջը... Եվ այդ ակորդը պիտի աստիճանաբար հետ քաշվի ու մարի, որովհետև արարողությունից հետո հարս ու փեսան հետ-հետ են գնում, որպեսզի օջախին թիկունք ցույց չտան, քանզի դա մեղք է համարվում:

Եվ ինչպես են իրար հաջորդում ծայրահեղ տարբեր զգացում-

ևէր... Այս խորհրդավոր պահից րոպեներ առաջ փեսայի մորը տնից դուրս են կանչում մի զվարթ ու կատակային երգով՝ ասելով, թե իր համար կով կթող են բերել, տուն ավլող են բերել, վերջում էլ թե՝ մա-զեր փետտող ու գլուխ դմփող են բերել: Կոմիտասն առաջ գրառել էր այդ երգի այլ տարբերակներ և հիմա ուրախ էր, որ հանդիպել է ամենաաշխույժ և արագ տարբերակին:

Թագվորի՛ մեր, դու՛ս արի,
Տե՛ս՝ քեզ ինչեր ենք բերել.
Թագվորի՛ մեր, դու՛ս արի,
Քեզ ջուր բերող ենք բերել:

Թագվորի՛ մեր, դու՛ս արի,
Քեզ թաղդ ավլող ենք բերել:
Թագվորի՛ մեր, դու՛ս արի,
Քեզ կով կթող ենք բերել:
Թագվորի՛ մեր, դու՛ս արի,
Քեզ ճաշ էփող ենք բերել:
Թագվորի՛ մեր, դու՛ս արի,
Քեզ գլուխ դմփող ենք բերել:

Անցան ամիսներ, մինչև Կոմիտասը մեկ ուրիշ հարսանիքում լսեց իր փնտրած այն երգը, որտեղ փեսան ու հարսն անվանվում են Արև և Լուսին: Հարսանքավորները՝ բաժանված երկու խմբի, եր-գեցին հարց ու պատասխանի ձևով.

-Էն արև, երկնուց արև, տեսեք՝ էն որն է:
-Էն արև, երկնուց արև, մեր թագավորն է:
-Էն լուսին ամպերի մեջ, տեսեք՝ էն որն է:
-Էն լուսին ամպերի մեջ մեր թագուհին է:

Տարիներ կանցնեն, մինչև Կոմիտասը կամբողջացնի ծեսը:

Կոմիտասը հասկացավ, որ այս ծեսը կարծես մի մեծ ու վաղն-ջական առասպելի մի մասն է՝ կից վանեցիների այն հավատա-լիքին, որ Արևը մի մանուկ է, որը, առյուծի վրա նստած, սլանում է

երկնքում, հետո մայր է մտնում Վանա լճում: Հետո էլ Արևը մեծացել և ամուսնացել է Լուսնի հետ: Այս ծեսն այդտեղից է գալիս:

Ծեսը դարձել է կանաչ-կարմիր արև, ծիածանաթև շողշողուն երկինք, ճանապարհ դեպի հայրենի Կենաց ծառ, դարձել է հայրենի անդաստանների վրա թևածող ոգու երգ ու կանչ, ամուսնություն երկնքի ու երկրի, արևի և լուսնի, որից ծնվելու է գողթան երգիչների երգած Վահագնը՝ արևաչ ու հրեղեն...

Պսակի հաջորդ օրը՝ կերուխումից հետո՝ երեկոյան, սկսվեց մեծ պարը՝ «Շորորը»: Կոմիտասը վեր թռավ տեղից և կանգնեց շուրջպարի գլխին: Սրնգահարը սկսեց «Շորորի» մեղեդին, թնդացին թմբուկի վեհապանծ զարկերը: Կոմիտասը ծոցից հանեց թաշկինակն ու թափահարելով բարձրացրեց, բոլորեց պարաշրջանը: Պարողները ձեռքները միացրին իրար՝ ագուցելով ճկույթները, և սկսեցին շորորալ դանդաղ, աննկատ, միանման. ասես մեկ մարդ էր պարում: Հայացքներն ուղիղ, գլուխներն ուղիղ ու անշարժ պահած՝ շարունակում էին «Շորորի» ալիքը՝ պարաքայլերով գծելով հին նախշը՝ ասես ասեղնագործելով:

Կոմիտասն սկսեց շրջանը դանդաղորեն տանել ձախից աջ՝ վեր-վար շորորալով ու ասես օդի միջով աջ սահելով:

Սրինգը նվագեց Արևի կանչի ելևէջը, սրինգը կանչեց հեռու՜-հեռու՜...

Նախավերջին՝ Հրատի օրը՝ գիշերը, թագվորի վրայից հանեցին կանաչ-կարմիր նարոտը... Զույգը մտավ առագաստ:

Հարսանյաց ծեսի յոթերորդ օրը Արևի օրն է:

Կոմիտասը չէր քնել գիշերը, անհամբեր սպասում էր լուսումութին, երբ նոր-նոր պիտի լույսը բացվի՝ մինչև արևի երևալը, որովհետև երգելով կանչելու էին Արևին:

Լուսումութին Կոմիտասն արդեն տան բակում սպասում էր, երբ հարս ու փեսան չամուսնացածների խմբի հետ բարձրացան տան կտուր, կանգնեցին երեսով դեպի արևելք: Խումբը սկսեց երգել ու կանչել արևին մեկ այլ անունով՝ «Վահե, Վահե...»՝ողջունելով առավոտին՝ այգին՝ «էգին»: Երգեցին այնքան, մինչև երևացին արևի շողերը, հետո ծագեց արդար արեգակը.

Էգ, բարև, այ էգ, բարև,
Էգ արևուն տանք բարև,
Տա թագվորին շատ արև,
Վահե, Վահե, Վահե...
Էգ, բարև, այ էգ, բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տա թագուհուն շատ արև,
Վահե, Վահե, Վահե...

Եվ երբ արևի հազարագունի շողերը զարդարեցին երկինքը, նորապսակները փոխեփոխ երգեցին «Առավոտուն բարի լուս» երգը:

-Առավոտուն բարի լուս,
Աստված պահե ամենուս,
Թող դուս գա լուս թշնամուս,
Լորիկ... լոր իմ, լուս լորիկ:
-Հազար էրնեկ էն ավուր,-
Տավուլ-զուռնա չալեցուցին,
Կանաչ-կարմիր հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Ավետարան կարդացուցին,
Ձեռը ձեռին տվեցուցին:
Տույ, տույ, տույ...
-Առավոտուն բարի լուս,
Բարև ասա բարևուս,
Բարին հասնե արևուս:
Առավոտուն բարի լուս,
Արևն ելավ սարի ուս,
Արի երթանք դար ի դուս:
Առավոտուն բարի լուս,
Աստված պահե մեր երկուս,
Լոր, ոսկի սուն իմ հոգուս:




# ՀԱՐՍԱՆՅԱՑ ԾԵՍ

### Հատվածներ Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսից»

**1** | Երկու-երեք օր առաջ տղամարդկանց հարսանիքի են հրավիրում փեսան և նրա քավորը՝ զուռնան առաջը և ձեռքում մի շիշ արաղ: Տան առաջ տանտերը հարգանքով ընդունում է նրանց և մի բաժակ օղի է վայելում նրանց ձեռքից՝ իբրև նշան, որ նա ընդունում է հրավերը, պատրաստվում է գնալ հարսանիքի և սաչու (նվեր) տալու: Նրանցից ով կամք չունի սաչու տալ, օղի չի ընդունում և առաջին ընթրիքը վայելելուց հետո այլևս չի մասնակցում հարսանիքին: Սաչու տվողների համար առաջին ընդհանուր ընթրիքից հետո առանձին կերակուրներ են պատրաստվում:

Ուրբաթ օրը հարկավոր է հրավիրել քավորին... Փեսան, նրա ազգաբները, հայրը, մայրը, քույրը և մոտ բարեկամները գնում են քավորին հրավիրելու:

Փեսան վերցնում է իր հետ շաքարի կտորներ կամ խնձորներ, նրա մայրը կամ քույրը՝ ձեռքին մի փունջ ծաղիկ (մեխակ, մախմուր ծաղիկ, հոտավետ չորացած կամ կանաչ մարզա և այլն), իսկ ազգաբները՝ գավաթով գինի մի բաժակ ափսեի մեջ՝ շուրջը չոր միրգ շարած: Փունջը մատուցվում է քավորակնոջը, իսկ մնացյալներին՝ մի բաժակ գինի:

Այսպես է լինում, երբ քավորը և փեսան միևնույն գյուղում են, իսկ եթե ջոկ գյուղում են, այն ժամանակ քավորը գալով փեսայի տունը, այնտեղ է պատրաստում ծառը, որ պարսկահայերի մեջ կոչվում է ուրց:

Փեսայի և հյուրերի հավաքվելուց հետո ամենքը, միմյանց կից բոլորշի նստելով, սկսում են բարձրաձայն գովել ուրցը, որն ունի իրեն հատուկ երգեր: Ամենից առաջ գովում է քավորը՝ ուրցը ձեռքում բռնած, այսինքն՝ նա ասում է երգից մի տուն և ապա տալիս է կողքի նստածին, որը նույնպես երգելով մի տուն, տալիս է երրորդին և այլն: Այսպես ուրցը պտույտ է անում մինչև երգի ավարտը:

Ուրցը, կամ, ըստ մեր ռուսահայերի, ծառը, կազմված է մի գլխավոր փայտից, որի շուրջը թեք բարձրանում են ճյուղերը: Սրանց, ինչպես և գլխավոր փայտի վրա շինած են խաչաձև փայտեր, որոնց ծայրերում տնկում են խնձորներ: Գլխավոր փայտի վերին ծայրում դրած է հորիզոնական դիրքով խաչ, որ կոչվում է կաքավ և նրա խնձորները՝ գլխախնձորներ: Բացի խնձորներից ուրցը զարդարում են նաև գույնզգույն թելերով:

Ուրցի գովասանական երգը երգում են այսպես.

Էս թագն էր խաչ,
Խաչի կոթն էր խաչ ու մաչ,
Շնորհավո՛ր պսակդ,
Արևդ էր կանաչ:

Էս թագն էր խաչ,
Խաչի կոթն էր խաչ ու մաչ,
Շնորհավո՛ր թագուհիդ,
Արևդ էր կանաչ...

Ապա կանգնում են՝ բոլորշի շղթայված և, թագավորին կանգնեցնելով շրջանի կենտրոնում՝ երեսը դեպի աղոթարան (արևելք), ազաբները գովում են նրան հետևյալ երգով.

Թագվո՛ր, ի՞նչ բերեմ քեզ նման,
Գարնան վարդն որ կբացվի,
Հոտն արևուդ նման:

Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
Նարգիզ ծաղիկ որ կբացվի,
Հոտն անուշ արևուդ նման...

**2 |** Թագվորը, քավորը և ազաբները գնում են ուրբաթ օր փեսայի զոքանչին այցելության: Փեսան համբուրում է նրա ձեռքը, իսկ նա՝ փեսայի երեսը: Փեսան և քավորն ստանում են գուլպա, արխալուղ և այլն՝ ըստ կարողության: Ապա պտտվում են գյուղի մեծերի մոտ, համբուրում է փեսան նրանց ձեռքը, ծաղկեփունջ է մատուցում նրանց՝ իբրև հրավիրման նշան, և նրանք էլ համբուրում են նրա երեսը: Այս հրավերը կոչվում է խարնսի խաբար:

Հրավերի հետևյալ օրից քավորը միշտ իր ձեռքում պտտեցնում է ուրցը մինչև հարսանիքի վերջը:

Աղջիկներն ու հարսները թաշկինակները ծածանելով պարում են: Ապա տղամարդիկ, նրանց հետ շղթա կապած, կազմում են միագին շրջան և պարում են «Գյոնդ» (դանդաղ շուրջպար): Այդ ժամանակ թագավորի ազգականները գինի են բերում իրենց տներից և հյուրասիրում են ամենքին:

Այլ գյուղերից հրավիրված հյուրերի համար զուռնան դուրս է գալիս ընդառաջ և ընդունում է յուրաքանչյուրին՝ իբրև արտակարգ պատիվ:

Սույն ուրբաթ երեկոյին պատրաստվում են հարսնահոր տան համար: Բոլոր խոստացած նյութեղենը, բարձած ազաբներից մինի

վրա, ուղարկում են խնամու տուն: Նրան ասում են Աղվես: Աղվեսին ուղեկցում են զուռնան, պարզ աղջկունք և տղայք: Դրանց գնալու ժամանակ ճանապարհին ընդառաջ է դուրս գալիս գյուղի կտրիճներից մինը և առաջարկում Աղվեսին կամ մենամարտել, կամ տալ նրան մի գավաթ գինի և ազատվել: Մենամարտը հազիվ է գլուխ գալի, քանի որ հաճախ ուզածն ստանալով՝ հաշտությամբ է վերջանում գործը:

Ղազախում փեսան իր ազաբներով, երբ գնում է մի այլ գյուղ՝ իր նշանածի հետ պսակվելու, նա իր հետ անպատճառ պետք է վերցնի հաց, գինի հարսնացուի գյուղի ազաբների համար, որոնք խմբովին կտրում են գյուղի մոտ հարսնավորների ճանապարհը և պահանջում են իրենց հասանելի ուտելեղենը:

**3 |** Ագուլիսում և նրա շրջակայքում հարսանյաց հանդեսի սկզբում ուրբաթ օրը, սազանդարներով կամ զուռնայով կատարվում է տաշտադրեքը: Հարսանիքի համար հաց թխող և խմոր հունցող կանայք, տաշտի երկու ծայրից բռնած, պարում են ու փեսայի հորից ստանում են նվեր: Նույն նվերը տրվում է թոնդիր վառելու և լավաշ թխելու ժամանակ:

Ապա ընտրվում է մառանապետ, ով նվեր ստանալով շալ, գոտի, պատրաստվում է վերահսկել ուտելյաց և ըմպելյաց վրա: Կերակուր եփողները, ամանները ձեռքներին պարելով, ստանում են իրենց հասանելիք նվերը և կանգնում են գործի:

Մարդկանց հրավերը կատարվում է մի ընտրյալի ձեռքով, որը մի մետաքսե թաշկինակի մեջ պահած չոր ծաղիկներ է բաժանում և թաշկինակն իրան վերցնում:

Հետևյալ օրը՝ շաբաթ, ընտրվում է մի ազաբբաշի, և սա զուռնայի ուղեկցությամբ, մետաքսե թաշկինակը ձեռափայտի վրա դրոշականման կապած՝ շրջագայելով հրավիրում է թագավորի մոտ ազգականներին, որոնք մի-մի թաշկինակ են կապում ազաբբաշու փայտին ու զուռնային:

Վերջը նուռ ու խնձոր առած ազաբ բաշին հրավիրում է քավորին ու քավորակնոջը և զուռնաչու հետ սոցանից ստանում է նվեր մի-մի թաշկինակ: Քավորակինը հետն առնում է մի կտոր շաքար

և կանաչ ու կարմիր մետաքսե թել-հինան: Դրա համար քավորակնոջ առաջ դնում են մի սինի, ջուր և հինա: Հենց որ նա հինա և ջուր է խառնում իրար, զուռնան իսկույն նվագում է, աղջկունք, կանայք և տղամարդիկ, որոնք աչքերը բևեռած նայում էին քավորակնոջ արարքի վրա, իսկույն ձայն են տալի ամեն կողմից՝ «Աստված շնորհավո՜ր անի», և հինան սինով բարձած պարում են:

Ապա մի խոնչայի մեջ պատրաստում են զանազան մրգեղեն ու շաքար, իսկ մյուս խոնչայի մեջ հարսի հանդերձը և հինան: Երիտասարդ տղայք հինայով ներկում են մի խոյի ճակատն ու մեջքը և կանաչ-կարմիր թել են կապում վիզը, իսկ եղջյուրները զարդարում են վառ մոմերով:

Խոնչաներն ուսերին՝ ազաբբաշու գլխավորությամբ երիտասարդները, զարդարուն խոյը առաջն արած, պտույտ են տալիս հանդիսականների մեջ և հետո քավորակնոջ հետ, զուռնա նվագելով, տանում են այդ բոլորը հարսնացուի տուն:

Նորահարսի բարեկամները զուռնայով ընդառաջ են գալիս և ընդունում են նրանց:

Տարած խոնչաները և խոյը նորից պտտեցնում են հանդիսականների շուրջ և հետո խոնչաները նվիրում են հարսնացուին, իսկ խոյը՝ նրա եղբորը, որից հետո քավորակինը, ազաբբաշին և նրանց ուղեկիցները նորից վերադառնում են փեսայի մոտ:

**4 |** Ղազախում գեղեցիկ տեսարան է, երբ թագվորը՝ զարդարված նոր հանդերձով և շրջապատված հանդիսականներով և ազաբներով, որոնք այնտեղ կոչվում են մակարներ, կանգնած է բացօթյա: Նրա քույրը՝ մետաքսե թաշկինակը ձեռին ծածանելով, զուռնայի նվագածությամբ պարում է ծանրաքայլ և մոտենալով եղբորը՝ համբուրում է նրան, ապա, թաշկինակը աջ ուսով կապում է ձախ թևի տակ: Դա կոչվում է ուսկապ:

Շիրակի, Կարսի և Բասենի գյուղորայքում հարսանքի երկրորդ օրը մի քանի երիտասարդ քավորի առաջնորդությամբ, բայց առանց թագավորի, գնում են հարսին բերելու և սոքա կոչվում են հարսնառներ:

Վերջիններիս գնալուց հետո քավորի ազգականներից մինը

հրավիրում է իր տուն նորափեսին և ժողովում է նրա համար ազաբներ: Լողացնում են նորափեսին, հագցնում են նոր հանդերձ: Սափրիչը սափրում է նրա և ազաբների երեսները: Այդ ժամանակից նորափեսին անվանում են թագվոր: Նրա գլխի ֆասը կամ արախճինը սափրիչը վերցնում է իրեն:

Ազաբները թագվորի վզով խաչաձև անցուցանում են մետաքսե թաշկինակ, որը և ասվում է կոսպանդ, իսկ ոտքերին հագցնում են սոլեր: Կոսպանդը և սոլերը նվիրում է քավորը: Ազաբները հինայով ներկում են թագվորի և իրենց ձեռքերը: Բայց նախքան թագվորին հագցնելը քահանան օրհնում է նրա հանդերձը և հանձնում է ազաբներին:

Ալեքսանդրապոլում ազաբբաշին, թուրը ձեռքին, բարձր ձայնով դիմելով ազաբների խմբին, ասում է. «Թագվորի՛ ազաբներ, գիտե՞ք՝ մեր թագվորն ինչ ունի»: Ազաբբաշին, ցույց տալով արխալուղը, շարունակում է. «Մի լավ թանկագին շալ արխալուղ՝ գինը չորս թուման»: Խումբը երգում է.

Ասե՛նք շնորհավոր, ասե՛նք շնորհավոր
Մեր թագավորին, հազա՛ր շնորհավոր:

Երբ հագուստով զարդարում են թագվորին, սկսում են գովել նրա հանդերձի մասերը: Ազաբների առաջին խումբը երգում է.

Էսօր մեզ էրնեկ,
Մեզ հազար էրնեկ,
Մեր թագվորն է աջ
Աչկոց խաչ ու մաչ,
Կոսպանդն է կարմիր,
Արևն է կանաչ:

Այս տունը ամբողջությամբ կրկնում է ազաբների երկրորդ խումբը, որից հետո առաջին խումբը նորից շարունակում է, և երկրորդը կրկնում է.

Էսօր մեզ էրնեկ,
Մեզ հազար էրնեկ,
Մեր թագվորն է աջ
Աչկոց խաչ ու մաչ,

Գոտին է արծաթ,
Արևն է կանաչ:

Այսպես հիշատակում են հանդերձի բոլոր մասերը: Ապա սկսում են գովաբանել անմիջապես թագվորին նույն երգերով՝ «Թագավո՜ր, ի՞նչ բերեմ քո նման» և այլն, որից հետո՝ «Խնձոր, խնձոր, գլխի խնձոր» և այլն՝ գովելով նաև սորա մեջ թագվորին, թագուհուն, խաչեղբորը, քահանային, տիրացուներին, ազաբներին և այլն:

Վերջապես գովաբանողները դիմում են թագվորի ծնողաց և ազգականներին հետևյալ երգով.

Գնացեք ասեք՝ թագվորահե՜ր, թագվորահե՜ր,
Ծառդ գոված է...
Գնացեք ասեք՝ թագվորամե՜ր, թագվորամե՜ր,
Ծառդ գոված է...

**5|** Հենց հարսանիքի սկզբում փեսան առանձին, շրջապատված իր ազաբներով՝ մակարներով, զուռնայի նվագածությամբ և երիտասարդ հարսներով, ուխտի են գնում. յուրաքանչյուրն իր գյուղի մոտի սրբատեղին, ջերմեռանդությամբ աղոթում են, մոմ վառում, խունկ ծխում, համբուրում անպաճույճ քարերը և դառնում են տուն: Եթե գյուղի շուրջը կա մի քանի ուխտատեղիներ, ոչ մինը զանց չեն առնում. բոլորին էլ կարգով այցելում են:

Հին Նախիջևանում և Հին Ջուղայում շաբաթ երեկո՝ հարսանիքի երկրորդ օրը, հասակակից երիտասարդ աղջկունք, հարսնացուին շրջապատելով, հինա են դնում նրա ձեռքերի վրա: Հետևյալ օրը՝ կիրակի, թագվորը, քավորը, խաչեղբայրը, ազաբբաշին, վառած մոմերը ձեռքներին, հանդերձը տանում են հարսի տունը:

Հանդերձը հագցնելուց հետո հրավիրում են քավորին, որ հարսի գոտիկը կապի: Նախ քավորը իր գդակով ծածկում է հարսի գլուխը և քամարի ծայրից բռնած՝ երեք անգամ անց է կացնում հարսի գլխից և ոտքերից՝ ասելով. «Յոթը տղա բերես, մի աղջիկ», և ապա կապում է քամարը նրա մեջքին և նվեր տալիս հարսի գլուխ կապողին ու հեռանում է կանանց բաժնից:

Այստեղ զոքանչը նոր մոմեր է դնում փեսայի և մյուսների ձեռքը,

նվիրում է փեսային (ըստ կարողության) ժամացույց, կամ երբեմն էլ՝ մի-մի մետաքսե թաշկինակ, դնում է նրա առաջ խոնչա՝ զանազան ուտելեղենով (հավ, հալվա, գաթավարաղածածկ կամ կարմիր ձու և այլն), որ ազաբբաշին իսկույն ևեթ ժողովում, տանում է՝ մյուս օրն այգում վայելելու համար:

**6 |** Երբ աղջիկը (հարսը) հոր տանից պետք է դուրս գա, այդտեղ կատարվում է մի շատ սրտաշարժ տեսարան. զարդարված նորահարս աղջիկը, շրջապատված իր ընկեր աղջիկներով, զուռնայի նվագածությամբ բազմաթիվ հանդիսականների առաջ ծանրաքայլ ընթացքով պտտվում է տան օջախի շուրջը, ծնկաչոք համբուրում է օջախի քարը, դուռը, տան շեմը, յոթն անգամ պտտվում է հայրական թոնդրի շուրջը և ծնկաչոք համբուրում է թոնդրի շուրթը, ապա համբուրում է ծնողաց ձեռքը, որ վերջին հրաժեշտը տա:

... Ազաբները և թագվորի կողմի մարդիկ, դուրսը կանգնած, դիտմամբ գոչումներ են անում՝«ճինինի՜, ճինինի՜, հարսը տարա՜ն», որպեսզի բարկացնեն հարսի ծնողաց և բարեկամներին:

Այդ հրաժեշտի, լացի, աղմուկի և ուրախության ժամանակ ազաբներից մինը, որ կոչվում է Աղվես, ընկնում է հարսի հորանց հավերի հետևից և ծածուկ աշխատում է բռնել նրանց և տանել, որպեսզի հետո ազաբներն ուտեն, քեֆ անեն:

Այստեղ այդ անձը հավագողության համար կոչվում է Աղվես, բայց շատ տեղեր էլ Աղվեսը հավ չի գողանում, այլ լրաբեր է հարսանիքի ժամանակ:

Թագավորը, ձեռի թաշկինակով մի խնձոր փաթաթած, սեղմում է միշտ իր շրթունքները նրանով: Եկեղեցի պսակի գնալու ժամանակ Աղվեսներից մինն իր հետ տանում է մի գավաթ գինի և մի բաժակ: Յուրաքանչյուր հանդիսական իրավունք ունի գինով բաժակը մոտեցնելու թագավորի բերանին ու ասելու. «Լուսը Լուսավորչին, հավատն է Քրիստոսին, օրհնյա՛լ Աստված, անուշ, անո՜ւշ, անո՜ւշ», և թագավորը, անձայն, անժպիտ, խոնարհ, անտրտունջ մի կաթիլ բերանն է առնում ու խնձորը նորից սեղմում շրթունքներին:

Պսակ գնալու ժամանակ թագավորը գնում է առաջից, նրա կողքին խաչեղբայրը՝ իր անբաժան թուրը ձեռքին, իսկ մի քայլ թագա-

վորի հետևից գնում են հարսը, հարսի թևը բռնած հարսնեղբայրը և քույրերը: Հանդիսականները շրջապատում են նրանց, և զուռնան, ամենքի առաջ մեղմ եղանակով («Առավոտ լուսոյ»-ի նման) նվագելով, ծանր քայլերով առաջ է շարժում բազմությանը:

... Հենց որ հասնում են եկեղեցու դուռը, զուռնան իսկույն ևեթ կտրում է իր ձայնը մինչև հարս ու փեսայի եկեղեցուց դուրս գալը:

**7 |** Հարսի հանդերձը հագցնում է քավորի կինը, իսկ քամարը կապում է հարսի եղբայրը՝ նախապես երեք անգամ անցկացնելով գլխով և ոտքերի տակից հանելով: Ապա աղջկունք և կանայք համբուրում են հարսին և դուրս բերում փեսայի մոտ:

... Սանամայրն իր հետ բերած շաքարի կտորը և կանաչ-կարմիր թելը հանձնում է քահանային, որ սա թելից շինե հարսի համար նարոտ, իսկ շաքարը ձգի աղջկա տնից բերած գինու բաժակի մեջ:

**8 |** Եկեղեցուց դուրս գալով՝ ում տան մոտով որ անցնի հարսանիքը, ամեն ոք՝ թե՛ բարեկամ, թե՛ օտար, հարսի գլխին ձգում են զանազան կտորներ (չիթ, թաշկինակ և այլն), իսկ ազաբներին ոչինչ չեն տալիս, ինչպես անում են այդ այլ տեղերում պսակ գնալու ժամանակ:

Եկեղեցուց մինչև թագվորի տունը զուռնայի նվագածությամբ դանդաղաքայլ ընթանում է հանդեսը, և պարում են հարսներ, աղջիկներ և տղայք: Թագվորի տան առաջ պատրաստած է լինում սեղան՝ զանազան ուտելիքներով ազաբների համար: Պարելով ընդառաջ են դուրս գալիս թագվորի մայրը, հայրը: Վերջինիս երեսը զվարճության համար ալյուր են քսում, թաղիքի կտոր են դնում գլխին, քթոց են անցկացնում վիզը: Շեմից անցնելու ժամանակ հարսի գլխին թուր են բռնում:

... Նորապսակները տուն ներս մտնելուց հետո ավելը տալիս են հարսի ձեռքը, ով տան հատակը փոքր ինչ ավլում է զանազան կողմերի վրա: Քահանայի «Ծագմանն» երգելիս թագվորն ու քավորը իրար կողքի և նրանց հետևից հարսը երեք անգամ պտտվում են թոնրի շուրջը: Իսկույն շերեփը ու աղը տալիս են հարսի ձեռքը, որ շերեփով խառնի թոնրի միջի դրած կերակուրը և աղ ձգի նրա մեջ: Ապա հարսին տանում են վարագույրի հետև:

... Հին ժամանակ սովորություն կար, որ մետաքսե թելերով պատած եղեգնյա փոքրիկ խաչ տնկում էին խնձորի կամ նռան մեջ և դնում էին նորապսակ թագավորի գդակի ծայրում, որը փոխարինում էր թագը: Այժմ վերացել է:

**9 |** Փեսայի տան սրահին հասած՝ հանդեսը փոքր կանգ է առնում: Ընդառաջ են դուրս գալիս փեսայի մայրը, քույրը, հարսը և մյուս կին ազգականները, մին-մին մոտենում թագվորին ու հարսին, համբուրում են նրանց և պսակը շնորհավորում:

Շատ զվարճալի է այդտեղ, որ երբեմն ծերունի փեսահայրը սկսում է պար գալ, ճարպիկ շարժումներ անել, քաշքշել իր կնոջը, որ նա էլ օրոր գա, ուժով բռնում է կնոջը, որ այնքան բազմության մեջ համբուրի, խաղք ու խայտառակ անի: Հանդեսն առավել զվարճալի անելու համար թագվորի մակարներն ալյուր են ցանում, քթոց են ծածկում թագվորահոր գլխին, բայց նա առանց մազաչափ նեղանալու շարունակում է պարել, ուրախանալ:

Սրահում հարսի գլխին ցանում են չամիչ և այլ չոր մրգեղեն, որը մանր տղայք իրար հրելով ժողովում, ուտում են: Շեմն անցնելիս խաչեղբայրը թուրը բռնում է թագվորի գլխին, և թագվորը կոտրում է իր տակ դրած կավե ամանը և անցնում է: Ապա հարսին տանում են կանանց բաժին: Վաղարշապատի գյուղերում սկեսուրը տան շեմին հարսի գլխին դնում է մի կտոր հաց, իսկ տան ներսն ավելը տալիս է հարսի ձեռքը:

**10 |** Հին Նախիջևանում, Հին Ջուղայում, Ագուլիսում, Վաղարշապատի և Բասենի գյուղերում հարսին հոր տանից դուրս բերելու և եկեղեցի տանելու խառը րոպեին հարսնեղբայրն աշխատում է համբուրել թագվորի կողմից եկած հարսներին, և այդ համբույրը կոչվում է խնամապաչ:

... Բարեկամները սովորաբար ընդառաջ դուրս գալով բարևում են, իսկ ազաբները ծիծաղելու և զվարճության համար երգում են հետևյալ երգը՝ դիմելով թագվորի մորը.

Թագվորի՛ մեր, դո՛ւ արի,
Տե՛ս, թե ինչեր եմ բերել,

Թագվորի՛ մեր, դո՛ւ արի,
Շերեփ խլող եմ բերել:

... Շեմով անցնելիս քավորը թուրը բռնում է գլուխների վրա և թագվորի ոտքերի տակ փշրելու համար դնում է կավե ափսե: Քահանան, շուրջառը ծածկած, իրարից ջոկում է հարսի և փեսի ձեռքերը, և հարսին տանում, կանգնեցնում են կանանց բաժնում՝ փափուկ բարձի վրա: Այդ րոպեից քավորը հանձնում է թուրը թագվորին, որ պահում է իր մոտ մինչև հարսանյաց վերջը:

**11 |** Կանչը վերջանալուց հետո (նվերները հայտարարելուց հետո) սկսվում է ընթրիքը, որից հետո պարողները՝ արք և կանայք, կազմում են մեծ շղթա և մինչև առավոտյան 3-4-ը պարում են 12 տեսակ պար... Այս պարերի մանրամասն նկարագրությունը կարելի է կարդալ Քաջբերունու «Ճանապարհորդական նկատողութիւնք» աշխատության մեջ:

Հարսանիքի վերջը երգում են «Կոտ ու կես կորեկ ունեմ» երգը և հետը պարում են «Ծունկ կոտրուկ» պարի եղանակով:

... Երեցփոխը կտրում է ուրցը և իր զարդերով մի-մի ճյուղ բաժանում է պատվավոր մարդկանց, իսկ մեջտեղի գլխավոր ճյուղը նվիրում է քավորին և նրանից եկեղեցու օգտին ստանում է նվեր: Քահանան բացում է նարոտը և խաչրկոթը (ուսկապները):

... Քավորը թուրը հանած կանգնում է, քանի որ քահանան կատարում է կարգը, և ապա թրով կտրում է նարոտը և տալիս է թագվորին՝ բարձի տակ պահելու համար:

... Հարսանիքը սրանով վերջանում է, բայց փեսան յոթ օր պաս է պահում, որ յոթ արու զավակ ունենա:

Պսակվելուց հետո, երբ նորահարսն առաջին անգամ գնում է եկեղեցի, նրա դեմքի շուրջը վառում են շատ մոմեր:

# ԵՐԳԵՐ



# ՕՐՀՆԵՐԳ ԵՎ ՕԾՈՒՄ

1. Օրհնեալ բարերար Աստված

2. Երկնից, գետնից

3. Երկնուց, գետնուց

4. Էջմիածնա զորութենով

5. Օրհնե Հիսուս

# ՕՐՀՆԵՐԳ ԵՒ ՕԾՈՒՄ

## 1. Օրհնյալ բարերար Աստված




## 2. Երկնից, գետնից






1. Երկնից, գետնից սուրբ
զորությունով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցավ,
Ծառ բազմեցավ,
Կանաչ ու կարմիր:

2. Էջմիածնա սուրբ
զորությունով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցավ,
Ծառ բազմեցավ,
Կանաչ ու կարմիր:

3. Լուսավորչա սուրբ
զորությունով
Այն ծառըն ծաղիկ էր.
Ծառ ծաղկեցավ,
Ծառ բազմեցավ,
Կանաչ ու կարմիր:

## 3. Երկնուց, գետնուց

Մեծաշուք
**Maestoso**




## 4. Էջմիածնա զորութենով

Ասերգի նման
**Come recitativo**



# 5. Օրհնե Հիսուս

Աշխույժով
**Con moto**




*Ծառը դրված է սեղանի վրա, սինու մեջ.*
Օրհնե Հիսո՛ւս, օրհնե Քրիստո՛ս,
Թագվորահոր օրհնությունով,
Թագվորամոր օրհնությունով,
Հայրապետաց օրհնությունով,
Վարդապետաց օրհնությունով,
Քահանայից օրհնությունով:
*Ապա ծառը բարձացնելով երգում են.*
Օրհնյալ ծառը նոր կանգնեցավ,
Խաչն էլ գլխին արդ բազմեցավ,
Քաղցր պտղով զարդարվեցավ,
Անմահության հոտ բուրեցավ,
Սուրբ օրհնություն տարածվեցավ,
Թշնամու սիրտը քաղցրացավ:
Բարի հրամեք, թագավորներ.
*Այստեղ թագավորը զլուխ է տալիս երգողներին.*
Բարի հրամեք, կնքահայրներ.
*Գլուխ են տալիս.*
Օրհնե Հիսո՛ւս, օրհնե Քրիստո՛ս:
*Նույն եղանակով.*
- Այն ո՞վ էր, որ առաջ օրհնեց,
Յուր սուրբ սրտովը նորոգեց,
Ամուսնության կապն հաստատեց,
Աճել ու շատանալ հրամայեց:
- Այն Աստված էր՝ առաջ օրհնեց,
Յուր սուրբ սրտովը նորոգեց,
Ադամ Եվային պսակեց,
Աճել ու շատանալ հրամայեց:
- Պսակտերն ո՞վ եղավ,
Նրանց քավորն ո՞վ եղավ,
Երգող-պարողն ո՞վ եղավ,
Հարսնիք անողն ո՞վ եղավ:
- Պսակատեր Տերն եղավ,
Քավոր՝ Գաբրիելն եղավ,
Երգող-պարող հրեշտակքն եղան,
Հարսնատունը դրախտն եղավ:

# ՀԻՆԱՅԻ ԵՐԳԵՐ

6. Աս հինան

7. Առավոտուն կելնես

8. Առավոտուն կելնես

# ՀԻՆԱՅԻ ԵՐԳԵՐ

## 6. Աս հինան
## (Հարսանեկան երգ հինայի)

Չափավոր
**Moderato**




## 7. Առավոտուն կելնես
## (Հարսանեկան երգ)

Միջակ
**Moderato**




## 8. Առավոտուն կելնես
## (Ծանր թևխաղ)

Չափավոր
**Moderato**



## ԾԱՂԿՈՆՔԻ ԵՐԳԵՐ

## ՀԱՐՍԻ

9. Բարի լուս, աղվոր

10. Եղնիկ

11. Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել

12. Վարդ, ըզքե չըմ սիրի

13. Ծալ էրա

14. Կաքավն էկավ

15. Կաքավն էկավ

# ԾԱՂԿՈՆՔԻ ԵՐԳԵՐ

## (Հարսի)

## 9. Բարի լուս, աղվոր

Միջակ
**Allegretto**




## 10. Եղնիկ

**Allegretto amabile**




## 11. Եղնիկ, դու ո՞ր սարն ես արծել

Գնայուն, զորովով
**Alegretto amabile**



1. - Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես արծել,
- Ասիս-Մասիս սարն եմ արծել:
- Եղնի՛կ, դու ո՞ր ջուրն ես խըմել:
- Սառն աղբյուրի ջուրն եմ խըմել:

2. - Եղնի՛կ, դու ո՞ր սարն ես քընել:
- Հայոց Անի սարն եմ քընել:
- Եղնի՛կ, դու ո՞ր ծառն ես քերվել:
- Ծառն խընկենի ծառն եմ քերվել:

## 12. Վարդ, զքե չըմ սիրի

Չափավոր - Միջակ
**Moderato**




Վա՛րդ, զքե չը՛մ սիրի, վա՛յ, վա՛յ,
Քու մերն էլ փուշ էր, վա՛յ, վա՛յ,
Հազա՛ր որ փուշ էր, վա՛յ չալարի (ավաղ),
Խոտիկ (հոտիկն) անուշ էր:

Սուսա՛մ, քե չը՛մ սիրի,
Սարեր ղշուշ էր.
Հազա՛ր ղշուշ էր,
Խոտիկ անուշ էր:

Ասմի՛ն (հասմիկ), քե չը՛մ սիրի,
Կապույտ ծաղիկ էր.
Հազա՛ր կապույտ էր
Կանաչ խաձին (պուրակ) էր:

Սոսո՛ւն, քե չը՛մ սիրեր,
Ասա (ժեռ) քար կըլներ (կրուներ).
Հազա՛ր սաս էր,
Քընց (քանց) հմեն թազա (նոր) էր:

Ասերգի նման
**Come recitativo**

## 13. Ծալ էրա



## 14. Կաքավն եկավ

Հանդարտ, վշտահույզ
**Mesto**




## 15. Կաքավն եկավ

Աշխույժ
**Animato**



## ԾԱՂԿՈՆՔԻ ԵՐԳԵՐ

## ԹԱԳՎՈՐԻ ԳՈՎՔԵՐ ԵՎ ԾԱՌԻ ԵՐԳԵՐ

---

16. Մեր թագվորն էր խաչ

17. Մեր թագվորն էր խաչ

18. Մեր թագվորն էր խաչ

19. Մեր թագվորն էր խաչ

20. Մեր թագվորն էր խաչ

21. Մեր թագվորն էր խաչ

22. Մեր թագվորն էր աջ

23. Աս թագիկ ո՞ւմ թագի նման էր

24. Թագավոր թագն ի գլուխ

25. Թագավոր թագն ի գլուխ

26. Մեր թագվորին էլ ի՞նչ պիտեր

27. Մեր թագավորին ի՞նչ կու պիտեր

28. Մեր թագվորին ի՞նչ կպիտեր

29. Մեր թագավորին ի՞նչ կպիտեր

30. Թագվորինը ո՞վը կըպիտերը

31. Որ թագիկ էր շուռ ու մուռ կէր

32. Թագվոր բարով

33. Թագվոր, բարով, հազար բարով

34. Թագվոր, բարով, խազար բարով

35. Թագվոր, բարով, հազար բարով

36. Թագվոր, բարով, հազար բարով

37. Թագվոր, դու բարով եկար

38. Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նման

39. Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման

40. Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման

41. Թագվոր, ինչ բերեմ քե նման

42. Թագվոր, ինչ բերիմ քյո նման

43. Թագվոր, ինչ բերիմ քյո նման

44. Թագվոր, ինչ բերեմ քյո նման

45. Թագվոր, ինչ բերեմ քո նման

46. Քաղենք, բերենք մեր թագվորին

47. Ծաղիկն էլ ինչենի՞ պիտի

48. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

49. Այս ծառն ծաղիկ պիտեր

50. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

51. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

52. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

53. Ծաղիկն էլ ինչենի պիտեր

# ԾԱՂԿՈՆՔԻ ԵՐԳԵՐ
## (Թագվորի գովքեր և ծառի երգեր)

### 16. Մեր թագվորն էր խաչ




1. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Պըսակն էր կարմիր,
Արնն էր կանաչ:

2. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Շապիկն էր կարմիր,
Արնն էր կանաչ:

3. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Չուխան էր կարմիր,
Արնն էր կանաչ:

4. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Շալվարն էր կապույտ,
Արնն էր կանաչ:

5. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գոտին էր կարմիր,
Արնն էր կանաչ:

6. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գուլբան էր նախշուն,
Արնն էր կանաչ:

7. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Մաշիկն էր կարմիր,
Արնն էր կանաչ:

8. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գըտակն էր բուխար,
Արնն էր կանաչ:

9. Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Կոզբաղն էր կարմիր,
Արնն էր կանաչ:

10. Սեր թագվորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Ձիուկն էր հրեղեն,
Թագվորն էր վըրեն:

## 17. Մեր թագվորն էր խաչ

Հանդարտ, հպարտ
**Con alterezza**




## 18. Մեր թագվորն էր խաչ

Հանդարտ
**Sostenuto**




## 19. Մեր թագվորն էր խաչ

Հանդարտ
**Sostenuto**



## 20. Մեր թազվորն էր խաչ




## 21. Մեր թազվորն էր խաչ




## 22. Մեր թազվորն էր աջ

Հանդարտ
**Sostenuto**



## 23. Աս թազիկ ո՞ւմ թազի նման էր

Չափավոր
**Moderato**




## 24. Թազավոր թագն ի գլուխ

Աշխույժ
**Con vivacita**




Էջմիածին երևանցին զուր մուրազն տեր:
Աղա Մուղնին.........

## 25. Թազավոր թագն ի գլուխ

Աշխույժ
**Con vivacita**



2. Թագավոր թագն ի գըլուխ,
Ծառ ծուռ ու մուռ էր.
Սուրբ Կարապետն էր Մըշեցին,
Ցուր մուրադը տեր:

3. Թագավոր թագն ի գըլուխ,
Ծառ ծուռ ու մուռ էր.
Երուսաղեմ մեջ աշխարհքին
Ցուր մուրադը տեր:

## 26. Մեր թագվորին էլ ի՞նչ պիտեր




1. Մեր թագվորին էլ ի՞նչ պիտեր,
Որ թազը շուռ գեր:-
Թագվորամեր կայնած պիտեր,
Որ թազը շուռ գեր:

2. Մեր թագվորին էլ ի՞նչ պիտեր,
Որ թազը շուռ գեր:-
Թագվորահեր կայնած պիտեր,
Որ թազը շուռ գեր:

3. Մեր թագվորին էլ ի՞նչ պիտեր,
Որ թազը շուռ գեր:-
Թագվորաքույր կայնած պիտեր,
Որ թազը շուռ գեր:

4. Մեր թագվորին էլ ի՞նչ պիտեր,
Որ թազը շուռ գեր:-
Թագվորաղբեր կայնած պիտեր,
Որ թազը շուռ գեր:

## 27. Մեր թագավորին ի՞նչ կու պիտեր



# 28. Մեր թագվորին ի՞նչ կպիտեր



# 29. Մեր թագավորին ի՞նչ կպիտեր



# 30. Թագվորինը ո՞վը կըպիտերը




# 31. Որ թագիկ էր շուռ ու մուռ կէր



# 32. Թագվոր, բարով

**Maestoso ♩ = 92**




2. Թագվոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերևով.
Երուսաղեմ զարեղ օրհնե,
Մեկ Աստըծո զորությունով:

3. Թագվոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերևով.
Սուրբ Կարապետ զարեղ օրհնե,
Մեկ Աստըծո զորությունով:

# 33. Թագվոր, բարով, հազար բարով

Ասերգի նման

**Come recitativo**



## 34. Թազվոր, բարով, խազար բարով




## 35. Թազվոր, բարով, հազար բարով



## 36. Թագվոր, բարով, հազար բարով

Ծանր
**Grave**




## 37. Թագվոր, դու բարով եկար

Չափավոր
**Moderato**




## 38. Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նման

Հանդիսավոր
**Maestoso**



1. Թա՛գվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Անթառամ ծաղիկ, որ կու բացվեր,
Բացվեր քո արևիդ նըման:

2. Թա՛գվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Բալասան ծաղիկ, որ կու բացվեր,
Բացվեր քո արևիդ նըման:

3. Թա՛գվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Համասփյուռ ծաղիկ, որ կու բացվեր,
Բացվեր քո արևիդ նըման:

4. Թա՛գվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Գներբուկ ծաղիկն, որ կու բացվեր,
Բացվեր քո արևիդ նըման:

5. Թա՛գվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Միրուն մանուշակ, որ կու բացվեր,
Բացվեր քո արևիդ նըման:

6. Թա՛գվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Գարնան վարդենիս, որ կու բացվեր,
Բացվեր քո արևիդ նըման:

## 39. Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման

Հանդիսավոր
**Maestoso**




## 40. Թագվոր, ի՞նչ բերեմ քե նման

Երգուն
**Cantabile**



## 41. Թազվոր, ի՞նչ բերեմ քե նման

Հանդիսավոր
**Maestoso**




## 42. Թազվոր, ի՞նչ բերիմ քյո նման

Հանդիսավոր
**Maestoso**




1. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Ծիրանի ծառ, որ կըծաղկեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

2. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Խնձորի ծառ, որ կըծաղկեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

3. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Դամոնի ծառ, որ կըծաղկեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

4. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Խաղողի ուռ կոճակ կապեր,
Պըտուկե ք դուք էլ էնոր նըման:

5. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Պընտուկի ծառ պըտուկ կապեր,
Պըտուկե՛ք դուք էլ էնոր նըման:

6. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արև քեզ նըման.
Ընկուզի ծառ պըտուղ կապեր,
Պըտուկե ք դուք էլ էնոր նըման:

# 43. Թազվոր, ի՞նչ բերիմ քյո նման

Հանդիսավոր
**Maestoso**




1. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Անուշ ռեհան, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

2. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Շուշան ծաղիկ, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

3. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Նարգիզ ծաղիկ, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

4. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Դեղին կակաչ, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

5. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Սարի սուսուն, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

6. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Աղբրանց արյուն, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

7. Թա՛զվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,-
Քո կանաչ արն քեզ նըման.
Ոսկեծաղիկ, որ կըհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

# 44. Թազվոր, ի՞նչ բերեմ քյո նման

Հանդիսավոր
**Maestoso**



# 45. Թագվոր, ի՞նչ բերեմ քո նման




# 46. Քաղենք, բերենք մեր թագվորին




Որ փաթըրթեր ճյուղն ու տերև
խետ իրրաց:

# 47. Ծաղիկն էլ ինչենի՞ պիտի



## 48. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

Աշխույժ
**Con vivacita**




## 49. Այս ծառն ծաղիկ պիտեր

Ծանր
**Grave**




## 50. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

Աշխույժ
**Con vivacita**




## 51. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

Աշխույժ
**Con vivacita**



1. Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց:
Ծաղիկն էլ ինչենի՞ պիտեր ծաղկունաց,
Քաղե՛նք, բերե՛նք մեր թագվորին,
Որ փաթըթեր ճուղն ու տերն հետ իրրաց:

2. Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց:
Ծաղիկն էլ խընկենի պիտեր ծաղկունաց,
Քաղե՛նք, բերե՛նք մեր թագվորին,
Որ փաթըթեր ծառն ու ծաղիկ հետ իրրաց:

3. Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց:
Ծաղիկն էլ նըռնենի պիտեր ծաղկունաց,
Քաղե՛նք, բերե՛նք մեր թագվորին,
Որ փաթըթեր թուփն ու տերն հետ իրրաց:

3. Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց:
Ծաղիկն էլ նըշենի պիտեր ծաղկունաց,
Քաղե՛նք, բերե՛նք մեր թագվորին,
Որ փաթըթեր ճութն ու տերն հետ իրրաց:

## 52. Մեր թագվորին ծաղիկ պիտեր

Աշխույժ
**Con vivacita**




## 53. Ծաղիկն էլ ինչենի՞ պիտեր

Աշխույժ
**Con vivacita**



# ԹԱԳՎՈՐԱՄԵՐ,
# ԹԱԳՎՈՐԱՀԵՐ,
# ՔԱՎՈՐ ԵՎ ԱՅԼՆ

---

54. Գացեք, բերեք թագվորամեր

55. Գացեք կանչեք զթագվորահեր

56. Թագավրի քյավոր կանգնած պիտեր

# ԹԱԳՎՈՐԱՄԵՐ, ԹԱԳՎՈՐԱՀԵՐ, ՔԱՎՈՐ ԵՒ ԱՅԼՆ

## 54. Գացեք, բերեք թագվորամեր



## 55. Գացեք կանչեք զթագվորահեր

Հանդիսավոր
**Maestoso**




## 56. Թագավրի քյավոր կանգնած պիտեր




2. Թագավրի մեր կանգնած պիտեր, (կրկն.):
3. Թագավրի խեր կանգնած պիտեր, (կրկն.):
4. Թագավրի քյավորկին կանգնած պիտեր, (կրկն.):
5. Թագավրի աղբեր կանգնած պիտեր, (կրկն.):
6. Թագավրի քույրեր կանգնած պիտեր, (կրկն.):
7. Թագավրի խորաղբեր կանգնած պիտեր, (կրկն.):
և այլն՝ այսպես թագավորի բոլոր բարեկամները:

# ՁԻՈՒ ԳՈՎՔԸ

57. Թագվոր, քո ձիուն

58. Թագվոր ձիավոր

59. Թագվոր, քո ձիուն

# ՁԻՈՒ ԳՈՎՔԸ

## 57. Թագվոր, քո ձիուն




## 58. Թագվոր ձիավոր




2. Թագվորի մեր կանգնած պիտեր, (կրկն.):
3. Թագվորի խեր կանգնած պիտեր, (կրկն.):
4. Թագվորի քեավորկին կանգնած պիտեր, (կրկն.):
5. Թագվորի աղբեր կանգնած պիտեր, (կրկն.):
6. Թագվորի քույրեր կանգնած պիտեր, (կրկն.):
7. Թագվորի խորոխբեր կանգնած պիտեր, (կրկն.):
Եւ այլն թագավորի բոլոր բարեկամները:

## 59. Թագվոր, քո ձիուն

Հանդարտ, հպարտ
**Con alterezza**



# ՀԱՐՍ ՈՒ ՓԵՍԻ ՊԱՐԵՐ

60. Հարայ, էլլի յար

61. Այ, իմ հարստի դստրիկ

62. Չեմ կրՆա խաղա

# ՀԱՐՍ ՈՒ ՓԵՍԻ ՊԱՐԵՐ

## 60. Հարայ, էլլի յար




## 61. Այ, իմ հարստի դստրիկ

Ծանր-Չափավոր

**Adagio sostenuto**



# 62. Չեմ կրնա խաղա

**Քնքույշ նազանքով**

**Delicato**



# ՀԱՐՍԻՆ ՏԱՆԵԼԻՍ

63. Տանեն, թող տանեն

64. Խարսնիկ, վեր էլի

65. Արդ իրամանավ Աստվածային

# ՀԱՐՍԻՆ ՏԱՆԵԼԻՍ

## 63. Տանեն, թո՛ղ տանեն

Լայնաշունչ
**Largando**




## 64. Խարսնիկ, վե՛ր էլի

Ասերգի նման
**Come recitativo**

(Մոկաց Գնեկանց գյուղ)




## 65. Արդ հրամանավ Աստվածային

Լրջորեն, ասերգի նման
**Con seriate, come recitativo**



# ՆՈՐԱՀԱՐՍԻ ԼԱՑԸ

---

66. Մերիկ ջան հալալ

67. Դուն հալալ մերիկ

68. Դուն հալալ, մերիկ

69. Մերիկ, դուն հալալ

70. Շեմքիկ, մի՛ ժաժա

71. Մի՛ լար մարիկ

72. Կերթամ, մայրիկ

73. Օյ, օյ, յաման, ղարիպո

# ՆՈՐԱՀԱՐՍԻ ԼԱՑԸ

## 66. Մերիկ ջան հալալ




## 67. Դուն հալալ մերիկ



## 68. Դուն հալալ, մերիկ

Չափավոր, ազատ չափով
**Moderato, poco rubato**




## 69. Մերիկ, դուն հալալ

Չափավոր, ազատ չափով
**Moderato, poco rubato**




## 70. Շեմքիկ, մի՛ ժաժա

Լալագին
**Lamentevole**




## 71. Մի՛ լար մարիկ

Չափավոր
**Tranquillo**






## 72. Կերթամ, մայրիկ

(Շիրակ)

Վշտալից
**Con tristezza**




## 73. Օյ, օյ, յաման դարիպո

(Ալաշկերտ, Խաստուր գյուղ)

Լալագին
**Lamentevole**



# ԹԱԳՎՈՐԻ ՄԵՐ, ԴՈՒՍ ԱՐԻ

թագվորի տան առջև

---

74. Թագվորի մե՛ր, դուս արի

75. Թագվորի մե՛ր, դուս արի

76. Թագվորի մե՛ր, դուս արի

77. Թագվորի մե՛ր, դուս արի

78. Թագվորի մե՛ր, դուս արի

79. Թագվորի մե՛ր, տյուս արի

80. Թագվորի մե՛ր, տյուս արի

81. Թագվորի մե՛ր, դյուս արի

82. Թագվորի մե՛ր, դյուս արի

83. Թագվորի մե՛ր, դուրս արի

84. Թագվորամեր, դուս արի

85. Խարսի կեսուր, դուս արի

## ԹԱԳՎՈՐԻ ՄԵՐ, ԴՈՒՍ ԱՐԻ
## (թագվորի տան առջև)

### 74. Թագվորի մեր, դուս արի




### 75. Թագվորի մեր, դուս արի

Միջակ
**Alegretto**



## 76. Թագվորի մեր, դուս արի

Միջակ
**Alegretto**




## 77. Թագվորի մեր, դուս արի




1. Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչե՛ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե ջուր բերող ենք բերե:

2. Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչե՛ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե կով կըթող ենք բերե:

3. Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչե՛ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե թաղդ ավլող ենք բերե:

4. Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչե՛ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե գլուխ դըմբող ենք բերե:

## 78. Թագվորի մեր, դուս արի

Աշխույժ
**Allegro moderato**



## 79. Թագվորի մեր, տյուս արի




## 80. Թագվորի մեր, տյուս արի

Միջակ
**Alegretto**




## 81. Թագվորի մեր, դյուս արի

Միջակ
**Alegretto**



## 82. Թազվորի մեր, դյո՛ւ արի

Միջակ
**Alegretto**




## 83. Թազվորի մեր, դո՛ւրս արի

Հանդարտ
**Tranquillo**




## 84. Թազվորամեր, դուս արի
(Ապարան)




## 85. Խարսի կեսուր, դուս արի

Միջակ
**Alegretto**




քե զը-լուխ դըմ - փող եմ բե - րե:
քե ծամ կըռ - ռող եմ բե - րե:
քե թաղտ ավ - լող եմ բե - րե:
քե թո-նիր վա - ռող եմ բե - րե:
քե ջուր բե - րող եմ բե - րե:
քե գլուխ լվա - ցող եմ բե - րե:
քե փո - շի հա - նող եմ բե - րե:

# ԿԱՏԱԿԵՐԳԵՐ,
# ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ...

86. Մեր թագվորին ի՞նչ պիտի

87. Էն դիզան

88. Էն դիզան

89. Էն դիզան

90. Էն քուլան

91. Նա լուս էր

92. Նա լուս էր

93. Նա լուս էր

94. Նա լուս էր

95. Էն վերի գլխախնձոր

96. Այն վերի գլխախնձոր

# ԿԱՏԱԿԵՐԳԵՐ, ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ...

## 86. Մեր թագվորին ի՞նչ պիտի

Զվարթ, զորովալից
**Allegretto amabile**




1. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի քաթան շապիկ պիտի:

2. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի մահուդ չուխա պիտի:

3. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի մահուդ շալվար պիտի:

4. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի քիրման գոտիկ պիտի:

5. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի ջուխտ լավ գուլբա պիտի:

6. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի ջուխտ լավ կոշիկ պիտի:

7. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի բուխար գըլխարկ պիտի:

8. Մեր թագվորին ի՞նչ պիտի:-
Մի լավ խաս փեշքիր պիտի:

## 87. Էն դիզան

**Con spirito 𝅗𝅥. = 48**




1. Էն դիզան, բեռ-բեռ դիզան, տեսեք էն ո՞րն է:
Էն դիզան, բեռ-բեռ դիզան՝ զեղի ռեսներն է:

2. Ճընճըղներ ճըլվըլալեն, տեսեք էն ո՞րն է:
Ճընճըղներ ճըլվըլալեն՝ էն տիրացուքն է:

3. Էն արև, երկնուց արև, տեսեք էն ո՞րն է:
Էն արև, երկնուց արև՝ մեր թագավորն է:

4. Էն լուսին ամպերի մեջ, տեսեք էն ո՞րն է:
Էն լուսին ամպերի մեջ՝ մեր թագուհին է:

5. Ցախավել իդեվ դըռան, տեսեք էն ո՞րն է:
Ցախավել իդեվ դըռան՝ էն մշակներն է:

6. Շունն եկավ պարկն ի բերան, տեսեք էն ո՞րն է:
Շունն եկավ պարկն ի բերան՝ զեղի զզիրն է:

7. Մուկն եկավ ալրաթաթախ, տեսեք էն ո՞րն է:
Մուկն եկավ ալրաթաթախ՝ էն ջաղցըպանն է:

# 88. Էն դիզան
(Ռշտունյաց)




# 89. Էն դիզան




# 90. Էն քուլան



# 91. Նա լուս էր

Հումորով
**Con spirito**




2.- Նա ջուխտակ աստղա կշտին, տեսեք ան ի՞նչ ի։ - Նա ջուխտակ աստղա կշտին, սարկավայքերն ի։
3.- Նա բարձր տեղըրի տեղըր, տեսեք ան ի՞նչ ի։ - Նա բարձր տեղըրի տեղըր, խարսի մաղտեն ի։
4.- Նա թոնիր՝ ինչ թուս ու մուր, տեսեք ան ի՞նչ ի։ - Նա թոնիր՝ ինչ թուս ու մուր, մեր տանուտերն ի։
5.- Ցախավել խետքըն դըրան, տեսեք ան ի՞նչ ի։ - Ցախավել, խետքըն դըրան, խարսի ծամերն ի։
6.- Շունն էլավ՝ վա՛, վա՛, վա՛, վա՛, տեսեք ան ի՞նչ ի։ - Շունն էլավ՝ վա՛, վա՛, վա՛, վա՛, խարսի սկեսուրն ի։
7.- Կատուն էլավ՝ ճի՛նգի-վի՛նգի, տեսեք ան ի՞նչ ի։ - Կատուն էլավ՝ ճի՛նգի-վի՛նգի, խարսի սկեսրայրն ի։

# 92. Նա լուս էր




# 93. Նա լուս էր

Միջակ
**Alegro moderato**



## 94. Նա լուս էր




## 95. Էն վերի գլխախնձոր




… Գլխախնձոր, էն թագավորն ա,
Թևախնձոր, էն ուր քավորն ա,
Բամբակն ի ծառ, էն թագուհին ա:

Սարեկներ ծվըլալեն … վարդապետնին ա,
Ճնճղներ ճվըլալեն … սարկավագներն ա,
Ղարղըներ ղըրղըրալեն … էն տերտերներն ա:

# 96. Այն վերի գլխախնձոր

Հումորով
**Con spirito**




Այն աջի ձեռախնձոր ... մեր թագուհին է:
Այն ձախի քեֆախնձոր ... կնքահայրերն են:
Այն ներքի եռախնձոր ... հարսնևորներն են:
Այն միջի օրհնյալ խնձոր ... նոր թագավորն է:
Այն բնի մեկ հատ խնձոր ... նոր թագուհին է:

*«Այն վերի գլխախնձոր»-ի եղանակով.*

Ճնճղուս ճտվըտալով հարցից ով է նա...
տիրացուներն են:
Կաքավը կարկաչելով ... մեր կնքահայրն է:
Սոխակը քաղցր երգելով ... մեր թագավորն է:

Սանամը սըրնչելով ... մեր թագուհին է:
Արտուտը շվացընելով ... մեր քահանան է:
Առաջ ուրախ, հետո տրտում ... հարսնևորները:
Փսփսալով տներ քանդող ... պառավ կնտիք:
Մութ տեղերում թոյնա մտնող ... ազապ տղենին:
Ավելը դռան ետև ... գյուղի գզիրն է:
Տիկը ուսին, աչքը մսին ... ժամակոչն է:
Մուկ'մ եկավ պոչն ալրոտ ... ջաղցըպանն է:

# ԽՆՋՈՒՅՔԻ ԵՐԳԵՐ

97. Խումար պառկեր՝ երես բաց

98. Խումար

99. Առնեմ, էրթամ էն սարը

100. Առնեմ, երթամ իմ յարը

101. Կոտ ու կես կորեկ ունեմ

102. Վեր էլի, հայ

103. Վեր էլի, հայ

# ԽՆՁՈՒՅՔԻ ԵՐԳԵՐ

## 97. Խումար պառկեր՝ երես բաց

Կատակելով
**Scherzando**




## 98. Խումար

Կատակ
**Scherzo** ♩. = 60



## 99. Առնեմ, երթամ էն սարը

Հրճվալից
**Con giubilo**




Վըրան եմ զարկել դարին,
Պայման եմ դրել տարին,
Տարին թող գա, լրանա,
Հետը բերէ իր բարին:

*Առնեմ, երթամ…*

Հենց որ ծաղկի արևը,
Քեզի դրկեմ բարևը,
Իմանամ դու իմ յարն ես,
Առնեմ ելնեմ վերևը:

*Առնեմ, երթամ…*

Քարն տակին պաղ աղբյուր,
Արծաթի թաս, ոսկի ջուր.
Ես կըլվարիմ քո սիրուն,
Մի թաս ուզեմ, երկուս տուր:

*Առնեմ, երթամ…*

## 100. Առնեմ, երթամ իմ յարը

Հրճվալից
**Con giubilo**




## 101. Կոտ ու կես կորեկ ունեմ

Փորր ինչ թեթև
**Facile**






Կոտ ու կես գարի ունիմ *ցանելու համար,*
*Ցանելու...*
Տունը մեկ վեցկի տըրվեք վարելու համար,
*Վարելու...*
Տունը մեկ մըշակ տըրվեք ցանելու համար,
*Ցանելու...*
Տունը մեկ մանկեռ տըրվեք տափելու համար,
*Տափելու...*
Տունը մեկ ջըրկալ տըրվեք ջըրելու համար,
*Ջըրելու...*
Տունը մեկ մանգաղ տըրվեք քաղելու համար,
*Քաղելու...*
Տունը մեկ հընձվոր տըրվեք *հընձելու համար,*
*Հընձելու...*
Տունը մեկ մըշակ տըրվեք *կապելու համար,*
*Կապելու...*
Տունը մեկ մըշակ տըրվեք *բարդելու համար,*
*Բարդելու...*
Տունը մեկ հաչակ տըրվեք *դիզելու համար,*
*Դիզելու...*
Տունը մեկ սելվոր տըրվեք *կըրելու համար,*
*Կըրելու...*
Ճընճուղներ չըլնի ցըրվեն *ուտելու համար:*
*Ուտելու...*

*Այ ճընճղիկ...*

Կոտ ու կես գարի ունիմ *կալսելու համար,*
*Կալելու...*
Տունն երկու ջարջառ տըրվեք *ծեծելու համար,*
*Ծեծելու...*
Տունն երկու եզը տըրվեք *լըծելու համար,*
*Լըծելու...*
Տունն երկու քառէշք տըրվեք *էրելու համար,*
*Էրելու...*
Տունն երկու մաղ ժողվեցեք *մաղելու համար,*
*Մաղելու...*
Տունն երկու մարդ ժողվեցեք *չափելու համար,*
*Չափելու...*
Տունն երկու ջաղաց տըրվեք *աղալու համար,*
*Աղալու...*
Տունն երկու տաշտ ժողվեցեք *խըմորի համար,*
*Խըմորի...*
Տունն երկու կընիկ տըրվեք *հունցելու համար,*
*Հունցելու...*
Տունն երկու թոնիր տըրվեք *թըխելու համար,*
*Թըխելու...*
Տունն երկու մարդ ժողվեցեք *ուտելու համար,*
*Ուտելու...*
Ճընճուղներ չըլնի ժողվեն *ուտելու համար:*
*Ուտելու...*

*Այ ճընճղիկ...*

# 102. Վե՛ր էլի, հա՛յ

(Մուշ)

Եռանդով
**Energico**




# 103. Վե՛ր էլի, հա՛յ



# ՊՍԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԱՅԳԱԲԱՑԸ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ԵՐԳԵՐ

---

104. Առավոտուն բարի լուս

105. Առավոտուն բարի լուս

106. Էգ բարև

# ՊՍԱԿԻ ՀԱՋՈՐԴ ՕՐԸ
# ԱՅԳԱԲԱՑԸ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ԵՐԳԵՐ
## 104. Առավոտուն բարի լուս






## 105. Առավոտուն բարի լուս






## 106. Էգ բարն

Միջակ
**Allegro moderato**



# ՋԱՆԱԶԱՆ ՆՎԱԳՆԵՐ ԵՎ ՊԱՐԵՂԱՆԱԿՆԵՐ

107. Հարսանեկան նվագ
(հարսին եկեղեցուց տուն բերելիս)

108. Մշո հարսանեկան

109. Հարսանեկան նվագ

110. Ճամփի պար

111. Պար

112. Թամզարա

113. Շորոր

# ԶԱՆԱԶԱՆ ՆՎԱԳՆԵՐ,
# ՊԱՐԵՂԱՆԱԿՆԵՐ

## 107. Հարսանեկան նվագ
## (հարսին եկեղեցուց տուն բերելիս)




## 108. Մշո հարսանեկան



# 109. Հարսանեկան նվագ

Դանդաղ
**Lento**



# 110. Ճամփի պար

(Ապարան)

Միջակ
**Moderato**

*Կատարում են երիտասարդները՝ հարսին եկեղեցի տանելիս և վերադառնալիս:*



# 111. Պար

Արագ
**Vivace**



և այլն:

# 112. Թամզարա

Եռանդով
**Energico**



# 113. Շորոր

Եռանդով
**Energico**

*Գիշեր ժամանակ պար են գալի հարսանիքներում, երբ հարսին եկեղեցուց արդեն տուն են բերել:*



# ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

## Լուսինե Ազարյան

Օպերային երգչուհի և խմբավար, Վիեննայի կամերային օպերային թատրոնի մեներգչուհի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, բազմաթիվ միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր Լուսինե Ազարյանն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրայի երգչախմբային դիրիժորության (դաս.՝ պրոֆ. Դավիթ Ղազարյան) և օպերային երգեցողության (դաս.՝ պրոֆ. Արաքս Դավթյան) բաժինները: Լուսինե Ազարյանը եղել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության կամերային երգչախմբի խմբավար, Հայաստանի երաժշտական ընկերության մանկական երգչախմբի ղեկավար, Հայաստանի առաջին վոկալ՝ «Լուսնակ» անսամբլի հիմնադիր և ղեկավար: Մինչ օրս հանդիսանում է «Արեգ» ժողովրդական նվագարանների անսամբլի հիմնադիրն ու ղեկավարը, «Արաքս» համույթի մեներգչուհին, ինչպես նաև «Կարին» ժողովրդական երգի-պարի անսամբլի խմբավարը:

## Էդգար Խաչատրյան

Էդգար Խաչատրյանը 2000-2006 թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասական վոկալի բաժնում:
2006 թվականից հանդես է գալիս Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի անսամբլում որպես մեներգիչ:
2011 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի կապակցությամբ արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի:

## Արսեն Համբարյան

Երգիչ, երգահան, գրող, ճարտարագետ Արսեն Համբարյանը երաժշտական գործունեությունը սկսել է ծավալել 2008 թվականից՝ երաժիշտ ընկերների հետ հիմնադրելով «Արատտա» հայ խոսքի ու երգի համույթը:
2012 թվականից աշխատում է Հայաստանի գուսանական և ժողովրդական երգի պետական անսամբլում որպես մեներգիչ:
2013 թվականից Հայաստանի գրողների միության անդամ է:

# Անուշ Ստեփանյան

Անուշ Ստեփանյանը 2008-2018թթ. հանդես է եկել «Նարեկացի» արվեստի միության «Նարեկացի» նվագախմբում որպես մեներգչուհի:
2013 թվականից մինչ օրս երգում և հարվածային գործիքներ է նվագում ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ ստեղծված «Ազգային գործիքների պահպանման և վերականգնման հիմնադրամի» «Ջնար» հայ ավանդական գործիքների համույթում:
Այս խմբերի կազմում համերգային շրջագայություններով հանդես է եկել Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Թուրքմենիայում և այլն:

# «Նարեկացի» նվագախումբ

«Նարեկացի» ժողովրդական նվագարանների համույթը ստեղծվել է 2008թ. «Նարեկացի» արվեստի միությունում հիմնադիր-նախագահ Նարեկ Հարությունյանի հոգածությամբ, մի քանի բարերար և արվեստասեր մարդկանց աջակցությամբ: Այն կյանքի է կոչվել դեռևս 2005 թվականին կազմակերպված թառի և քամանչայի անվճար դասընթացների հիման վրա:

Հիմնադրման օրից մինչև 2015 թվականի հունիսը համույթի գեղարվեստական ղեկավարն է եղել ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, անվանի թառահար Հովիկ Սահակյանը, այնուհետև՝ կոմպոզիտոր, թառահար, ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուրը:

2016թ. հունվարից «Նարեկացի» ժողովրդական նվագարանների համույթը վերակազմավորվել և վերանվանվել է «Նարեկացի» ժողովրդական գործիքների նվագախումբ:

Նվագախմբի առաքելությունն է երաժշտության միջոցով կապ հաստատել հայկական դարավոր մշակութային ժառանգության հետ՝ կամրջելով անցյալը, ներկան և ապագան:

Նվագախումբը 2008 թվականից ի վեր համերգներով բազմիցս շրջագայել է ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանի մարզերում:

2016թ.-ին ժողովրդական նվագարանների անսամբլների հանրապետական մրցույթ-փառատոնին Նվագախումբն արժանացել է Գլխավոր մրցանակի:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| «Նարեկացի» արվեստի միության խոսք | 3 |
| Նախաբան | 5 |
| Ծեսի ընթացքը ժամանակակից մատուցմամբ | 7 |
| Ավանդական հարսանյաց ծեսի նկարագրություններ | 12 |
| Հարսանյաց ծես / Հատվածներ Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսից» | 24 |
| Երգեր | 35 |
| Օրհներգ և օծում | 36 |
| Հինայի երգեր | 40 |
| Ծաղկոնքի երգեր հարսի | 42 |
| Ծաղկոնքի երգեր / Թագվորի գովքեր և ծառի երգեր | 46 |
| Թագվորամեր, թագվորահեր, քավոր | 66 |
| Ձիու գովքը | 69 |
| Հարս ու փեսի պարեր | 71 |
| Հարսին տանելիս | 74 |
| Նորահարսի լացը | 76 |
| Թագվորի մեր, դուս արի | 80 |
| Կատակերգեր, հարց ու պատասխան... | 85 |
| Խնջույքի երգեր | 91 |
| Պսակի հաջորդ օրը այգաբացը ողջունելու երգեր | 96 |
| Ջանազան նվագներ և պարեղանակներ | 100 |
| Կատարողներ | 103 |

գլխավոր խմբագիր՝
**Սվետլանա Դանիելյան**

երաժշտական խմբագիր՝
**Լուսինե Ազարյան**

սրբագրիչ՝
**Մարինե Հարությունյան**

նկարիչ՝
**Մարտին Ակողլյան**

համակարգչային շարվածքը՝
**Մարիամ Բրուտյանի**

հնչյունային ռեժիսոր՝
**Արմեն Եգանյան**

երգիչ կատարողներ՝

**Լուսինե Ազարյան** (1-11, 13-17, 21, 23, 28-31, 34, 36, 38, 41-54, 56-58, 60-96, 101-106)

**Էդգար Խաչատրյան** (18-20, 22, 24-27, 32, 33, 35, 37, 39, 40, 55, 89-96, 104-106)

**Արսեն Համբարյան** (12, 59, 97-100)

**Անուշ Ստեփանյան** (10, 11, 15)

գործիքային կատարումներ՝

«Նարեկացի» նվագախմբի մենակատարներ՝
գեղ. ղեկ., թառահար **Արտեմ Խաչատուր** (107, 111)
**Կարեն Մելքոնյան** – բլուլ (108)
**Էրիկ Հովհաննիսյան** – քամանչա (107, 109)
**Աննա Համբարձումյան** – սանթուր (107, 110)
**Սուսաննա Մանասերյան** – քանոն (112)
**Գագիկ Հակոբյան** – դուդուկ (113)

գործադիր պրոդյուսեր՝
**Նարեկ Յարութիւնեան**